2016, ՀՈՒՆԻՍ Ա, ԹԻՎ 11 (463)

Բիւզանդա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհակալական նամակը Գերմանիայի Բունդեսթագի նախագահին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նամակ է հղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի նախագահ Նորբերտ Լամերտին եւ իր գնահատանքն ու երախտագիտությունը հայտնել հունիսի 2-ին Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւի ընդունման կապակցությամբ:

Իր նամակում Նորին Սրբությունը, խիստ արժեւորելով պատմական արդարության վերականգնմանն ի նպաստ Գերմանիայի քաղաքական ու հասարակական գործիչների եւ ողջ ժողովրդի արտահայտած բարի կամքը, մասնավորապես ընդգծել է.

«Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանն ուղղված այս բանաձեւը կարեւոր քայլ է ոչ միայն հայ ժողովրդի նկատմամբ 20-րդ դարասկզբին գործված եղեռնագործության պատմական իրողությունը վերստին փաստելու, այլեւ կանխարգելելու այդօրինակ ոճիրների կրկնությունը պատմության մեջ: Կայացված որոշումը մեծ վկայություն եւ հրավեր է համայն աշխարհին՝ ընդվզելու երկրագնդի տարբեր անկյուններում մարդկության դեմ գործված հանցանքների առնչությամբ դրսեւորվող ժխտողական քաղաքականության դեմ եւ մերժելու այն:

Ի դեմս Ձեզ՝ Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք հղում Գերմանիայի Բունդեսթագի անդամներին եւ բարեսեր ողջ ժողովրդին՝ մաղթելով անկոտրում կամք եւ նախանձախնդրություն՝ մարդկային համընդհանուր արժեքների եւ իրավունքների պաշտպանության աստվածահաճո առաքելության մեջ»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի արդարադատության նախարարին

31 մայիսի

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարար Մուսթաֆա Փուր Մոհամմադիի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով նախարարի այցը Հայաստան՝ Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ երկու պետությունների միջեւ գործակցությունը բոլոր ոլորտներում օրեցօր ընդլայնվում է, եւ ՀՀ անկախության տարեգրության մեջ հայ-իրանական հարաբերություններում շոշափելի վերընթաց է նկատվում:

Նորին Սրբությունը գնահատանքով անդրադարձավ Իրանում հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգածու վերաբերմունքին, ինչպես նաեւ՝ հայոց սրբավայրերի ու եկեղեցական կառույցների նկատմամբ դրսեւորվող առանձնահատուկ խնամքին:

Իր հերթին Իրանի արդարադատության նախարարն ուրախություն հայտնեց հանդիպման առիթով՝ նույնպես կարեւորելով միջպետական կապերի զորացումը եւ տարբեր ոլորտներում առկա սերտ գործակցությունը: Անդրադառնալով կատարելով ապրիլյան դեպքերին՝ տիար Փուր Մոհամմադին իր մտահոգությունն արտահայտեց՝ վերահաստատելով Իրանի զորակցությունը ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Իրանի արդարադատության նախարարը քննարկեցին մարդկության կյանքում ծառացած մարտահրավերները, եւ այդ առումով արժեւորվեց կրոնի դերակատարությունն արդի աշխարհում:

Իր խոսքում նախարարը, փաստելով աշխարհում նկատվող՝ Աստծուց հեռանալու վտանգը եւ ծայրահեղականության ցավալի դրսեւորումները, ընդգծեց կրոնների խաղաղ գոյակցության եւ այս ուղղությամբ ջանքերը համատեղելու անհրաժեշտությունը, որպեսզի աղետները դիմագրավվեն մարդկության կյանքում:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ մարդկային կյանքի խնդիրները, ցավը եւ տառապանքը հուշում են, որ մարդ արարածը դադարել է ապրել Աստծու փառքի համար, շահը եւ ուժը տիրապետող են դարձել այսօր՝ վտանգավոր աստիճանի հասցնելով հոգեւոր-բարոյական արժեքները: Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ ի հեճուկս այդ կործանարար երեւույթների՝ բարեսեր մարդիկ իրենց նախանձախնդրությամբ պիտի կարողանան փոխել աշխարհի ընթացքը եւ խոչընդոտել չարի տարածմանը:

Վերջում Նորին Սրբությունը հաստատեց նաեւ, որ երկու ժողովուրդների համերաշխ գոյակցությունն ու ջերմ հարաբերությունները կարող են որպես ցանկալի օրինակ ծառայել ողջ աշխարհին՝ վկայելու, որ կրոնական տարբերությունները պատերազմի պատճառ չեն կարող հանդիսանալ:

Հանդիպմանը խոսվեց նաեւ հոգեւոր կրթական ծրագրերի ու արդարադատության ոլորտում ձեւավորվող գործակցության մասին:

1 հունիսի

Հայրապետական կրթաթոշակին արժանացած երեք ուսանողի

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայոց Հայրապետի կողմից սահմանված Հայրապետական կրթաթոշակին այս տարի ներկայացված Հայաստանի բուհերի երեք ուսանողի՝ ուղեկցությամբ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանի եւ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանի:

Ուսման ընթացքում ցուցաբերած բարձր առաջադիմության համար կրթաթոշակ շնորհվեց Նարեկ Մկրտչյանին (Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիա. 1-ին կուրս), Անահիտ Մամուլյանին (Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա. 2-րդ կուրս) եւ Իրինա Մուրադյանին (Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան. 3-րդ կուրս):

Հանդիպմանը Վարդան եպիսկոպոսը, ներկայացնելով Հայրապետական կրթաթոշակի արժանացած ուսանողներին, հայցեց Նորին Սրբության օրհնությունը:

Խոսք ասաց նաեւ կրթության եւ գիտության նախարարը: Անդրադառնալով օրվա խորհրդավորությանը եւ կրթության ոլորտում Մայր Աթոռի կողմից ցուցաբերվող հետեւողական աջակցությանը եւ շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ պրն Լ. Մկրտչյանը նշեց, որ սա գեղեցիկ առիթ է, որով գնահատվում է երիտասարդների աշխատանքը: Նախարարը, կարեւորելով հանդիպումը Հայոց Հայրապետի հետ, ընդգծեց, որ կրթաթոշակների հանձնումը սոսկ նյութական աջակցություն չէ, այլ ունի հոգեւոր խորհուրդ եւ նշանակություն:

Այնուհետեւ իր հայրապետական օրհնությունը կրթաթոշակակիրներին փոխանցեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը մասնավորապես անդրադարձ կատարեց կրթության կարեւորությանը՝ նշելով, որ այն մշտապես բարձր է

գնահատվել ազգային կյանքում: Հայոց Հայրապետն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին մշտապես հետամուտ է եղել ժողովրդի կրթության սրբազան գործին եւ այսօր էլ շարունակում է ամենայն ջանք գործադրել՝ կրթական զանազան ծրագրերի միջոցով նպաստելու ազգային ոգու եւ նկարագրի կերտմանը:

Նախարարի ներկայությունն ուսանողների եւ ողջ կրթական համակարգի համար խրախույս նկատելով՝ Նորին Սրբությունը նշեց, որ միայն կրթական բարձր մակարդակով եւ գիտելիքով է հնարավոր ապահով եւ զորեղ դարձնել հայրենիքը:

Վերստին շնորհավորելով երիտասարդներին՝ Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ նրանք պիտի բարեհաջող կերպով ավարտեն իրենց ուսումը եւ հարուստ գիտելիքների շնորհիվ նորանոր բարձունքներ նվաճեն:

Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց կրթության եւ գիտության նախարարին՝ այն զորակցության համար, որ նախարարության կողմից մշտապես ցուցաբերվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Հայոց Հովվապետը մաղթեց, որ Ամենակալ Աստված արդյունավորի նրա եւ նախարարության պաշտոնեության ջանքերը, որպեսզի դպրոցն ու բուհը իրապես դառնան ազգային ոգու ու նկարագրի դարբնոցներ եւ ազգին պարգեւեն գիտելիքների հարուստ պաշարով զինված հայորդիներ՝ նախնյաց արժանի զավակներ:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Մայր Աթոռի կողմից իրականացվող կրթական ծրագրերին եւ Ս. Էջմիածնի հովանու ներքո գործող կրթական հաստատությունների արձանագրած հաջողություններին:

Թոնդրակյան շարժումը եւ նրա պարագլուխներին դատապարտող գեղարվեստական համապատկերը Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմում

Սկիզբը՝ թիվ 5 -10

Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմում կարդում ենք.

Ու մռայլվեց արքան անչափ,
Որ փոշու պես ոտքը չընկան
Թոնդրակեցիք շղթայակապ.
Խոնարհվեցին պահ մի, սակայն
Չհայցեցին գութն էլ բազկի,
Միայն գլուխ տվին մռայլ՝
Այն էլ՝ ի սեր ... հայոց ազգի:
Ամպեց արքան ու ծանրաքայլ
Գնաց- բազմեց արքաբարձին,
Լռեց համր, ծանր մի պահ.
- Ա՞յս է հոտդ, ո՛վ գայլապահ,-
Քրթմնջաց, ասես վշտի մեջ կորած,-
Այսպե՞ս ես հովվել հոտն իմ ոչխարաց,
Է՞ր չես խունկի տեղ վառող շաղ տալիս,
Որ ցուլի նման ծունկի չեն գալիս
Արքայի առջեւ՝ արքայի նման,
Այս սատանաչյա ստրուկն էլ, սակայն,
Ծունկի չի գալիս խաչիդ էլ առջեւ:
Ու վեհի աչքին ճաղեր թվացին
Արքայի աչքի թարթիչները սեւ՝
Վանդակի՛ ճաղեր՝ վեհը մեջն ընկած...

(Թ., էջ 48-49)

Բարձրագույն ատյանում միմյանց դեմ բանավիճելով հերքող կամ հաստատող ընդդիմադիրների՝ թագավորի, կաթողիկոսի, սպարապետի, Գրիգոր Մագիստրոսի, ինչպես եւ շղթայված թոնդրակեցիների ու թոնդրակուհիների կենդանի կերպարները կերտված են բանաստեղծական բացառիկ պատկերավոր խոսքով, սրանց զրույցների ու երկխոսությունների բնականությամբ ու գեղարվեստական համոզչությամբ: Դաժան, անզիջում է նրանց՝ թատերականացված ներկայացում հիշեցնող երկխոսություն-բանակռիվը, որ վերածվում է իմացությունների բուռն ու անողոք մրցավեճի: Ընդ որում՝ բանավիճողները գիտեն միմյանց ուժեղ եւ թույլ կողմերը: Եվ լարվածությունը գնալով սաստկանում է, քանի որ համառողներից ոչ ոք չի պատրաստվում ընդունելու կամ խոստովանելու իր պարտությունն ու դիմացինի հաղթանակը. դա կողմերից մեկի համար կնշանակեր հայությանը զրկել պետական եւ հոգեւոր իշխանությունից ու թշնամուն մատնելով՝ կործանել Հայաստանը, մյուսի համար կնշանակեր դավաճանել օտարերկրյա տերերին, իրենց իսկ հրահրած ու երկրով մեկ ծավալված ազանդավորական հզոր շարժմանը, լքել պայքարի դաշտը, ծունկի իջնել թագավորի եւ հոգեւոր պետերի առջեւ եւ ընդունել նրանց գերիշխանությունը:

Գործողության զարգացումն ընթանում է այնպես, որ բանադրություն-դատավարության ընթացքում՝ շղթայված թոնդրակեցիները, անգամ նրանց գաղափարական առաջնորդը՝ իրեն «նոր Հիսուս» հռչակած, սակայն իրականում «մարդապատյան դեւ» Սմբատ Զարեհավանցին, սարսափում են միմիայն գործադրվելիք մահվան սպառնալիքից եւ միայն այդ դեպքերում են կյանք աղերսում զայրագնած թագավորից, կաթողիկոսից ու սպարապետից: *(Ի դեպ՝ Սմբատ Զարեհավանցու արտաքինի պատկերման մեջ էլ ակնհայտ է հեղինակի խիստ բացասական վերաբերմունքը նրա նկատմամբ.*

Խաչված Հիսուսի պատկերի առջեւ
Կանգնեց ու ծածկեց խաչված Հիսուսին,
Մի աչքը կապույտ, մյուս աչքը սեւ՝
Չարք թվաց ապշյալ կաթողիկոսին,
Ու ողջ ատյանին բանադրության
Մի մարդապատյան դեւ թվաց, սակայն,
Իր սեւ ու կապույտ աչքով էլ խոսում,
Ճակատագրին էին սպասում:

(Թ., էջ 43)

Մնացած պարագաներում այդ երկդիմի ճիվաղները հանդուգն են՝ իմաստունի կեցվածք ընդունած հերձվածողներ, որ հարմար պահի կարող էին եւ գործադրել իրենց հագուստների տակ թաքցրած զենքերը:

3.

Հովհ Շիրազի «Թոնդրակեցիները» իրոք պատմափիլիսոփայական պոեմ է՝ ազգային ու համամարդկային երանգավորումով: Այն սկսվում է դրամատիկ մի պահի պատկերումով, երբ պարտադրում են բանտարկված թոնդրակյան յոթ պարագլուխներին ծունկի գալ բանադրող բարձրագույն ատյանի՝ Հովհաննես Սմբատ արքայի, Վահրամ Պահլավունի սպարապետի, Հուսիկ Աղավնունի կաթողիկոսի, Գր. Մագիստրոս Փիլիսոփոսի եւ ատենադպիր Ա. Լաստիվերցու առջեւ, հրապարակավ ներումն հայցել եւ թողություն ստանալ: Այլապես նրանց սպառնում էր բանադրում եւ ճակատներին շիկացած երկաթով աղվեսադրոշմի խարանում: Բայց անդրդվելի են նրանք շղթաների մեջ անգամ, համառ են իրենց համոզմունքներում եւ իրենց դեմ են շարժում ոչ միայն պետական ու հոգեւոր առաջնորդների, այլեւ նախապես նրանց ազատելու խնդրանքով արքային դիմող ժողովրդի զայրույթն ու ցասումը:

Զարեհավանցին, Կյուրեղ, Վրվեռ եւ Թորակ թոնդրակեցիները, Կունծիկ աբեղան ճգնում են արդարանալ՝ մեջտեղ բերելով սոցիալական ու դավանաբանական, փիլիսոփայական համամարդկային խնդիրներ եւ գործի դնելով իրենց երկսայրի լեզուն ու ճարտասանական բոլոր հմտությունները:

Իհարկե, նրանց խոսքերում հնչում են նաեւ որոշակի ճշմարտություններ ռամիկների հողազրկության, իշխանների անմարդկային դաժանությունների, հոգեւորականների ագահության, գյուղացիներին ունեզրկելու, նրանց հողերը վանքապատկան դարձնելիս թույլ տված ապօրինությունների եւ զանազան շահատակությունների մասին:

Թոնդրակեցիների բոլոր դժգոհությունների հիմքում ընկած են հողի եւ հավատքի հիմնախնդիրները: Սրանց են ածանցվում մարդկային հարաբերությունները կարգավորող մյուս խնդիրները, որոնք պարզաբանվում են բանադրության ընթացքում երկու կողմերի միջեւ ծավալված բանավեճում: Թոնդրակյանները կա՛մ չքմեղանում են, կա՛մ ջանում են հիմնավորել իրենց անաստվածությունն ու Եկեղեցու դեմ ատելությունը, մերժում են Հիսուսի աստվածային լինելը, կրոնը, եկեղեցին ու նրա ծեսերը՝ Մկրտության ու Պսակի խորհուրդը, անաստվածության հետ միասին քարոզում են կանանց համայնացում ու ընտանեկան կապերի փլուզում եւ ազգընդդեմ այլ ծայրահեղություններ: Սակայն նրանք թաքցնում էին հայրենիքի, հայոց պետության դեմ իրենց գործած չարիքները եւ ազգային միասնությունը պառակտող ոճիրները: Հենց այս բանավեճի միջոցով է խիզախ բանաստեղծն արտահայտում իր ժխտողական վերաբերմունքը թոնդրակեցիների հակազգային ու հակապետական գործունեության, նրա կործանարար ազդեցության ողբերգական հետեւանքների եւ համակրանքը՝ ձեռքից գնացող երկիրը, պետականությունը անելանելի վիճակից փրկելու ելքեր որոնող ողջամիտ պետական-քաղաքական ու հոգեւոր գործիչների նկատմամբ:

Արքան կարծես «Անի» պոեմի Օհան-Սմբատը չէ, այլ հեղինակի պատկերացրած հայոց արքայի կատարելատիպը, որին բանաստեղծը կուզենար տեսնել իրականում: Դեռեւս գաղտնի է Անին հետմահու բյուզանդացիներին հանձնելու նրա իսկ ստորագրած «սեւ թուղթը»՝ հետկարը, նա մտահոգ է պետականության հիմքերն ամրապնդելու եւ բոլոր կողմերից թշնամական շրջափակման մեջ հայտնված երկիրը փրկելու համար: Բայց արտաքին թշնամուց ավելի վտանգավոր են երկրի ներքին ցեցերը՝ թշնամական ծրագրով գործող, ժողովրդին իրենց քարոզներով ապակողմնորոշող «թոնդրակյան ռաբբիները», ովքեր հայոց պետության ու Եկեղեցու դեմ են հանում սոցիալական դժվարություններից հիասթափված ժողովրդական զանգվածներին՝ հենվելով հոգեւոր եւ աշխարհիկ իշխանություններից նրանց բնական ու արդարացի դժգոհության վրա:

Պետրոս Գետադարձին փոխարինած Հուսիկ Աղավնունի կաթողիկոսը ողբում է հավատի սյուների խախտման, եկեղեցիների քանդման համար, տագնապում կանանց համայնացման, պերճաղիճ դառնալու եւ աթաշակով (սիֆիլիս)՝ այն ժամանակներում անբուժելի սեռական ախտով, ժողովրդին համաճարակելու վտանգից: Բանադրող կողմը՝ արքան, կաթողիկոսը, սպարապետը, Մագիստրոս Փիլիսոփոսը, անգամ վկաները միասնաբար ու միավորված խոսում են հայոց պետության եւ Հայ Եկեղեցու շահերի դիրքերից:

Շարունակությունը՝ էջ 3

Տեղի ունեցավ «Հայաստանում երեխաների այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության եւ ներառական կրթական ծառայությունների ընդհանուր գնահատում» խորագրով կլոր սեղան - քննարկում

Դեռեւս 2014 թ. Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու, Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) եւ «ՄԳԱ Վոթը» ընկերության միջեւ ստորագրվել էր համագործակցության հուշագիր, որի նպատակն էր նպաստել երեխաների իրավունքների պաշտպանության, մանուկների սոցիալական վիճակի բարելավման ծրագրերի մշակմանն ու իրագործմանը, երեխաներին ուղղված մշակութային, հոգեւոր-բարոյական դաստիարակության, գիտական ու հրատարակչական ծրագրերի իրականացմանը, երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանը եւ մասնագիտական կրթության որակի բարձրացմանը:

Հուշագրով ամրագրված համագործակցությունն առավել գործնական եւ նպատակային դարձնելու ակնկալիքով՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնը (ՔԴԿ), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցաբար, հունիսի 10-ին ՔԴԿ-ի երեւանյան գրասենյակում կազմակերպեց «Հայաստանում երեխաների այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության եւ ներառական կրթական ծառայությունների ընդհանուր գնահատում» խորագրով կլոր սեղան - քննարկում՝ ներկայացնելու այդ ոլորտում կուտակված փորձը եւ քննարկելու համագործակցության հնարավորությունները:

Քննարկմանը մասնակցում էին ԱԺ պատգամավորներ, ՀՀ կրթության եւ գիտության, աշխատանքի եւ սոցիալական հարցերի, արդարադատության եւ առողջապահության նախարարությունների, ՀՀ ոստիկանության, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաեւ տվյալ ոլորտում աշխատանքներ ծավալող միջազգային ու հասարակական կազմակերպությունների շուրջ 30 ներկայացուցիչ:

ՔԴԿ-ի եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի համագործակցությունը սույն աշխատաժողովի շրջանակներում հիմնականում դիտարկվեց երեք ուղղությամբ.

ա. աջակցություն ընտանիքներին. աշխատանք՝ խոցելի խմբերի երեխաների ընտանիքների, ինչպես նաեւ խնամատար ընտանիքների հետ,

բ. ֆիզիկական եւ հոգեւոր առողջություն. աշխատանք՝ միտված ֆիզիկական եւ մտավոր խնդիրներ ունեցող երեխաների հոգեւոր առողջության վերականգնմանն ու պահպանմանը,

գ. բռնության դեմ պայքար. աշխատանք՝ ուղղված ընտանիքներում եւ կրթական հաստատություններում բռնության հնարավոր երեւույթների կանխարգելմանը, բացահայտմանը եւ բացառմանը:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Հեթում քհն. Թարվերդյանը ծառայության է կոչվել Գուգարաց թեմում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանատան եկեղեցական ժողովական գրասենյակի տնօրեն Արսեն քհն. Միրզոյանը, ազատվելով Արմավիրի թեմում ստանձնած հովվական պարտականություններից, հետայսու շաբաթ եւ կիրակի օրերին կծառայի Մայր Աթոռի վանորեից տեսչությունում:

Լրատվական նյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Մարո ԱԼԱՋԱՆ

ԻՄ ԿՅՍՆՔԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ թիվ 7-9

Երբ գյուղի բոլոր տղամարդիկ հավաքվեցին Հեթումենց մարագում, զորքի մեծը եւս բաբեր մելիք Հակոբի հետ մարագ մտավ, ապա մեծը մենակ դուրս եկավ մարագից եւ դռանը մի մեծ կողպեք դրեց ու զորքին դառնալով՝ ձեռքի մի շարժումով հասկացրեց... Սեւ ասկյարը հրացանի սվինները դեպի մարագ ուղղեց եւ խտացրեց իր շարքերը:

Կանանց հանգիստ եւ միամիտ հետաքրքրությունը սուգ ու շիվանի, լաց ու կոծի փոխվեց: Շատերը ծնկաչոք, արտասվալի աչքերը դեպի երկինք դարձած՝ Աստծուց փրկություն էին հայցում: Մյուսները բարձրաձայն լալիս ու գլխներին էին խփում: Նրանց լացին միախառնվեցին երեխաների լացն ու ճիչը եւ հրացանի կրակոցները: Այդ ժամ բոլորի հայացքներն ուղղված էին դեպի դարմանանոցը: Մի քանի ասկյարներ բահն ու քլունգը ձեռքներին մարագի կտուրը բարձրացան եւ քանդեցին, մեծացրեցին մարագի էրթիկը: Երկու այլ ասկյարներ, նավթի դաբոները-ամանները ձեռքներին, մոտեցան մեծացրած երդիկին եւ ամբողջ ուժով նավթը շփեցին մարագի ներսը եւ տարբեր կողմերից լուցկիներ վառեցին: Բոցն ու ծուխը միախառնված՝ երկինք բարձրացան: Լսվում էր մարագում եղած տղամարդկանց աղիողորմ լացն ու ճիչը: Հերարձակ, խելակորույս մայրերն ու քույրերը դեպի մարագը վազեցին, բայց տեղն ու տեղը սվինահարվեցին եւ բոցերի մեջ շպրտվեցին, իրենց հույզերով ու տանջանքներով հարազատներին փարվեցին ու միասին մոխրացան:

Մարագից ելնող բոցն ու ծուխը՝ հրաբխային վիթխարի մի սյուն կազմած, դեպի կապույտ երկինք խոյացավ եւ իր լայնարձակ սեւ քողը փռեց Խոռանց գյուղի եւ մոտակա երկու լճերի վրա: Նրանք գյուղի ծանր վիշտը, կոհակներին առած, մեղմ խշշում, վաշ ու վիշ էին ասում: Իսկ սեգ Սիփանը՝ հրեղեն սյունի տաքությունից, իր ձյունակերտ թագը հալեց, արցունքի առվակներ կազմեց եւ զույգ լճերի կապույտ ջրերին խառնեց:

Սկսվեցին հրացանի համազարկերը, ալան-թալանը, հարս ու աղջիկներին քաշքշելը, դիմադրողներին սպանելը կամ ձիերին կապած անհայտ ուղղությամբ տանելը: Խուճապահար ժողովուրդը սկսեց դես ու դեն վազվզել. ջրհորներում, հացի ամբարներում, աթարի ամբրոզներում թաքնվել եւ հորձանուտ լճի ալիքներին հանձնվել, միայն թե թուրքական բանակի վայրագություններից ազատվի: Իսկ մարագի բոցն ու ծուխը, միախառնված այրվող տղամարդկանց լացին ու հառաչանքին, երկինք հասան: Գյուղում տարածվեց խորոված

Արծկե

մսի եւ խանձված մազերի տհաճ հոտը: Մարագի կտուրը փլվեց: Մարագը լռեց:

ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻ ՈՐՈՆՈՒՄԸ

Իրիկնամուտ էր: Նախիրն ու ոչխարների հոտը, Սիփանի հյութալի կանաչներից ու ծաղիկներից կշտացած, կրծքները ծաղկաբույր կաթով լցրած, ծանրաքայլ, օրոր ու շորոր, առանց հովիվների ուղեկցության, ըստ սովորության, գյուղը մտան:

Ձիավոր սեւ ասկյարները հարայ-հրոցով, հո, հըռ գոռգոռալով, շրջապատեցին նախիրն ու ոչխարների հոտը: Արտակարգ դրությունից սարսափահար՝ կովերն ու ոչխարները դես ու դեն վազվզեցին, ըմբոստացան եւ սովորության եւ տակից հանում ուռած, սեւացած, խանձված ու եփված անճանաչելի դիակները: Հարազատներ կորցրած մայր ու աղջիկները նայում էին խանձված ու սեւացած դիակներին՝ ով լինելը չորոշելով, մղկտալով, քանդում ու նորից քանդում էին մարագի փլատակները:

Մարագի դուռը բարձրացնելիս տակը գտան եղբորս՝ Առաքելին, որի հագուստները դեռ այրվում ու ծխում էին, գլուխը երկու կես էր եղել եւ ուղեղը դուրս թափվել: Մայրս բարձրաձայն ճչաց, օրորվելով դեպի եղբայրս գնաց, զույգ ձեռքերը դեպի երկինքը բարձրացնելով՝ ասաց.

- Արարի՛չ Աստված, ի՞նչ մեղք էինք գործել Քո առաջ, որ մեզ այսպես պատժեցիր, իմ անմեղ որդուն կտոր-կտոր արեցիր, հրին ու սրին արժանացրեցիր:

Ես մորս կողքին նստած լալիս ու կրկնում էի նրա խոսքերը՝ փարվելով նրան:

Մի կին զույգ ձեռքերով վերցրեց եղբորս ուղեղը եւ դրեց ջարդված գանգատուփի մեջ, իր գոգնոցը արձակելով՝ կապեց եղբորս գլուխը: Մյուս կանայք եղբորս մարմինը ազատեցին այրվող հագուստներից, հենց մարագի դռան մոտ մի փոս փորեցին եւ եղբորս դիակը մեջը դրեցին: Մայրս գրկեց նրա թարմ շիրիմը եւ երկար ողբաց, ապա վեր կացավ տեղից, օրորվելով դեպի ծխացող մարագը գնաց ու մի քանի սեւացած ու խանձված դիակներ շուռ ու մուռ տվեց, որ հորս փնտրի, եւ նրան ճանաչելու հույսը կտրած՝ նորից եղբորս գերեզմանին ծնկաչոք նստեց, երկար լացեց ու մորմոքեց ու վշտախորով տուն գնաց:

Մինչեւ ուշ գիշեր քրտնակոխ կանայք քանդեցին մարագի այրվող փլատակները եւ դուրս հանեցին հարյուրավոր անթեւ, անգլուխ, ուռած ու եփված, անճանաչելի դիակներ: Հարազատներին գտնելու եւ ճանաչելու հույսը կորցրած՝ մարագի մեջ դրին անճանաչելի դիակները եւ կառուցեցին ընդհանուր եղբայրական գերեզման, վրան դրին մի քանի փայտյա խաչեր, մոմեր վառեցին, խունկ ծխեցին, ծնկաչոք աղոթեցին ու գլխիկոր գնացին իրենց գալիք վիշտն ու տառապանքները կրելու:

Բզնունյանց ծովը մեղմ խշշում, վա՛շ-վո՛ւշ էր ասում, իսկ խռովահույզ Սիփանը՝ հայացքը խոժոռած, դարերի բարբարոսության աննման վկան մնաց:

ԳՅՈՒՂԻ ԱՌԱՎՈՏԸ

Լույսը բացվեց: Արեւն իր ոսկեգույն ճառագայթները գցեց մարդախորով եւ վշտախորով գյուղի վրա: Գյուղը խոր լռության եւ սգի մեջ էր: Թոնիրներից էլ ծուխ չէր բարձրանում, ընդմիշտ կտրվեց լավաշ հացի հաճելի բույրը, էլ չէր մայում գառն ու ոչխարների հոտը, ո՛չ նախրչին, ո՛չ էլ նախիրը էլ դուրս չէին գալիս գյուղից, էլ չէր լսվում ձիերի եւ քուռակների հաճելի խրխինջը: Գյուղի լռությունը խզեցին մի քաղցած շան աղիողորմ ոռնոցը եւ ծովի ալիքների մեղմ խշշոցը:

Մեր բակում հավաքվել էին մի քանի կանայք, որոնք իրար վշտակցում ու լալիս էին:

- Ա՜խ, Աստվա՜ծ իմ, շան ոռնոցը չարագուշակ է,- ասաց մի կին: Մյուսը թե՝

- Է՜հ, սրանից դեն ինչ ուզում է, թող լինի, մեռնելն ավելի լավ է, քան վշտախորով, առանց հարազատների, առանց գլխավորի ապրելը:

Մայրս կանանց խմբից անջատվեց եւ մտամոլոր, դեպի մեր տունն ուղղվեց: Փռած անկողինը հավաքեց, ինչ որ ամաններ մի տեղից վերցրեց մի այլ տեղ դրեց, ապա նույն մտամոլորությամբ, արցունքներն աչքերին՝ գոմը մտավ եւ դատարկ գոմի մեջտեղում կանգնած՝ բարձրաձայն լաց եղավ. ո՛չ մի անասուն, ո՛չ մի շունչ: Հանկարծ թառի վրա մի հավ կչկչաց, որով ուզում էր ասել, թե մենակ եմ, ընկեր եմ ուզում: Մայրս նույն մտամոլորությամբ, արցունքներն աչքերին՝ գոմից դուրս եկավ եւ գնաց հարեւանի տուն, որտեղ մի քանի կանայք հավաքված խոսում ու վատ-վատ բաներ էին գուշակում:

- Երանի սեւ ասկյարը գար եւ մեզ բոլորիս վառեր. այսպես ապրելով ի՞նչ կլինի մեր երեխաների վերջը. առանց տղամարդու, առանց եզների ո՞նց պիտի վարենք, ո՞նց պիտի ցանենք, ինչպե՞ս կերակրենք մեր եթիմներին,- ասաց կանանցից մեկը:

- Մեռնելն ավելի լավ է, քան էսպես ապրելը,- վրա բերեց մյուսը: Ապա խոր լռություն տիրեց. յուրաքանչյուրն ընկավ իր մտքերի մեջ:

Շարունակելի

Թոնդրակյան շարժումը եւ նրա պարագլուխներին դատապարտող գեղարվեստական համապատկերը Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմում

Սկիզբը՝ էջ 2

Այս իմաստով նրանք դառնում են յուրօրինակ իդեալականացված գաղափարատիպեր, որոնց կենսական ակունքը որոշակիորեն հեղինակի մտասեւեռումն է: Արքան պաշտպանում է Եկեղեցին ու հավատը, կաթողիկոսը՝ սրա հետ միասին՝ պետությունը, սպարապետը հայոց պետականության ամրապնդման, զորքի ուժեղացման եւ հայոց հողային կորուստները վերադարձնելու տեսլականով է տարված, բշնեցի իշխան Փիլիսոփոսը թոնդրակյաններին իր զորաջոկատներով հալածելուց հետո էլ նրանց վտանգավոր քարոզչությունն է մտքի ուժով սնանկացնում եւ բացահայտում նրանց գաղտնաթաքույց հանցանքները:

Մինչդեռ թոնդրակեցիներն ունեին իրենց կարգախոսները՝ Քրիստոսին, Աստծու եւ մարդու միջեւ միջնորդ հոգեւորականներին ժխտելու, Աստվածածնին անարգելու, կանանց համայնացման ու ազատ սիրո քարոզչության ճամարտակումներով: Արքայի պահանջով՝ իշխան Բշնեցին՝ Մագիստրոսն է բազմության առջեւ բացահայտում Զարեհավանցու ձեռքով գրված նոր «տասնաբանյան»՝ աղանդի ուղն ու ծուծը, «մարմնապաշտ կոչը, սրբություն եղծող գոչը ոգեսաստ»: Տասը քարոզնեերից միայն մի քանիսն էլ բավական են խնդրի բուն էությունը հասկանալու համար.

Ա. «Միշտ նույն կնոջ հետ ապրողն է գրաստ:
Ինչո՞ւ ողջ կյանքում մնա մեկինը
Հազարի արժան գեղանի կինը:

Բ. Կինն ինչքան ազատ՝ այնքան հարազատ,
Կինն իր կամքինն է,
Ոչ թե վանքինն է:
Ողջ համայնքինն են հողն, հացն ու գույքը,
Իմ սեփականն է միայն իմ ... մույկը:

Գ. Դրախտ չի տանի մեզ եկեղեցին,
Դրախտ կտանի կինն՝ ամենքիս ձին:

Զ. Կինը՝ գրկողին, հողը՝ հերկողին,
Հողը՝ հերկողին, կինը՝ գրկողին:

Թ. Կինն ամենքինն է, քոնն իմն է, ի՞նչ կին,
Բավ չէ՞ ճորտանա ճոխ կինը մեկին»:

(Թ. էջ 107-110)

Առանց բանավիճող կողմերի իմաստաբանելու եւ ճամարտակելու մանրամասնների մեջ խորանալու՝ ասենք, որ բախումն ավելի է սրվում, ու ժողովրդի զայրույթն ավելի սաստկանում է, երբ դատաստանի են բերվում նաեւ շղթայակապ թոնդրակուհիները՝ գեղեցկությամբ մեկը մյուսին գերազանցող ամլացած պերճաղիճներ, որոնք իրենց կանացիությամբ շարժում են թե՛ արքայի, թե՛ կաթողիկոսի, թե՛ սպարապետի ներքին անբառ հիացմունքը եւ թե՛ ժողովրդի անթաքույց բարձրաձայն հիացմունքն ու զայրույթը:

«Նոր Հիսուսի»՝ մի աչքը կապույտ, մյուսը՝ սեւ՝ թոնդրակյան առաջնորդի՝ «բոլոր չարիքների հայր» ծերուկ աղվես Սմբատ Զարեհավանցու հանդեպ շիրազյան վերաբերմունքը նաեւ ամբողջ շարժման բնութագիրն է: Սակայն հեղինակն այդ համազգային ողբերգության գնահատականը հնչեցնում է նաեւ թագավորի, կաթողիկոսի ու սպարապետի չափազանց սուր քաղաքական մեղադրանքներում, Մագիստրոսի՝ ազգային ու համամարդկային փիլիսոփայությամբ հագեցած ելույթներում, որոնցում առավել հստակ է երեւում ինչպես երկրի քաղաքական ծայրահեղ վտանգավոր իրադրության, այնպես էլ թոնդրակյանների հայրենադավ գործունեության իրական պատկերը:

Այս է պատմական բուն ճշմարտությունը Սմբատ Զարեհավանցու, նրա համակիրգործակիցների ու ողջ թոնդրակյան շարժման մասին:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հայրենասիրական ողբը

Մովսես Խորենացի, Ներսես Շնորհալի, Խաչատուր Կեչառեցի, Ստեփանոս Օրբելյան

Ողբն իր բազմազան տեսակներով հայ հին եւ միջնադարյան գրավոր մշակույթի մի կարեւոր բաժինն է կազմում: Ծնունդ առնելով մեր մատենագրության սկզբնավորման շրջանում՝ այն, իբրեւ ժողովրդի կյանքի պատմական եւ գեղարվեստական արտահայտություն, հարատեւել է մինչեւ նոր ժամանակները: Ողբի զարգացումը խորապես պայմանավորված է օտար նվաճողներին ենթակա հայ ժողովրդի կյանքի խիստ եղերական ընթացքով, ընթացք, որը հատկանշվում է ամենադաժան կեղեքումներով, ավերումներով ու սպանություններով, գաղթերով ու գերեվարումներով:

Ողբի՝ իբրեւ գրական ժանրի մի տեսակի ժանրային նախադրյալները գալիս են ժողովրդական բանարվեստից: Ողբասացությունը նախորդել է գրավոր խոսքին, ապա եւ գոյություն է ունեցել նրան զուգահեռ՝ իբրեւ բանավոր, անգիր ստեղծագործություն՝ անմիջականորեն կապված ժողովրդի առօրյայի եւ կենցաղի հետ: Առաջին ողբերը երեւան են եկել մեծ մասամբ իբրեւ ժողովրդական սգո ծեսի՝ մահենքի անհրաժեշտ մաս, թաղման արարողության հետ կազմել են միաձույլ ամբողջություն, որի բաղադրիչներն են եղել լացն ու կոծը, խոսքը եւ դրանց համապատասխանող տխուր մեղեդին, շարժումները: Հետագայում թաղման ծեսի ժամանակ կատարվող մահենքի ողբը հետզհետե ձեռք է բերել իր կատարողներին՝ ողբասաց կանանց, որոնք կոչվել են «եղկականք», «գուսանք ձայնարկուք սեւազգեստ եւ աշխատող կանայք», «բանահիւս կանայք լալականք»: Այս ողբասաց կանայք ունեցել են նաեւ իրենց պարագլուխը, առաջնորդը, որին կոչել են «եղերամայր», «մայր ողբոց»:

Թաղման ծեսի ժամանակ կատարվող մահենք ողբի դասական նմուշ կարող է համարվել Փառանձեմի ողբը Գնելի սպանության կապակցությամբ. «... եղեւ նա մայր ողբոցն: Եւ ձայնարկուքն ամենայն ի ձայն ողբոցն սկսան նուագել՝ զիրսն տրփանացն Տիրիթայ, զակն դնելն, զքսութիւնն, զհնարս մահու նիւթել, զսպանումն: Ձայնիւքն մրմնջոյն ի վերայ սպանելոյն ի մէջ կոծոյն բարբառէին՝ գեղգեղեալ խանդաղատութեամբ: Ի նուաճել իւրեանց ձայնիցն՝ իրքն յայտնեալ հռչակ հարկանէր» *(«Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Դ դպր., գլ. ԺԵ)*: Փառանձեմի եղերամայր դառնալու օրինակը ցույց է տալիս, որ հին ժամանակներում ողբասացությունը սգո ծեսի ժամանակ այնքան սովորական է եղել, որ նրան հմուտ են եղել եւ բարձրատոհմիկ, ազնվական կանայք:



Ժողովրդական ողբի նպատակն է եղել անդարձ կորուսյալի գործի, անձի եւ անվան բարձրագոչ փառաբանությունը: Միաժամանակ նպատակ է ունեցել պատկերել այն անսահման ցավն ու կորուստը, որ նրա հեռանալով ապրել են կենդանի հարազատներն ու մերձավորները:

Հայ իրականության մեջ, իր հիմնադրման եւ գոյության վաղ շրջանից սկսած, Քրիստոնեական Եկեղեցին պայքար է մղել հեթանոսական ժամանակներից եկող սգո եւ ողբի սովորության դեմ: Բայց, չնայած ողջ միջնադարի ընթացքում առկա այդ վերաբերմունքին, սգո ծեսը եւ նրա ժամանակ կատարվող ողբը գոյություն են ունեցել, դեռ ավելին՝ անգիր ողբասացությունը հիմք է դարձել գրական ողբի առաջացման եւ զարգացման համար: Դամբանական եւ պատմական ողբերում աչքի առաջ են ունեցել ժողովրդական ողբերգակներին, ձգտել են նմանվել նրանց: Դեպի անգիր բանաստեղծությունը, ժողովրդական ողբի բանարվեստն ունեցած այս ձգտումը պայմանավորված է եղել գեղարվեստական երկը հուզական եւ ներգործուն դարձնելու պահանջով: Այս կապակցությամբ, ինչպես նշում է Պողոս Խաչատրյանն իր «Հայ միջնադարյան պատմական ողբեր» գրքում, տեղին է հիշել Գրիգոր Նարեկացուն, որն իր երկի ԻԶ բանում մի ընդարձակ հատված ոգելով 15-վանկյա տողերով՝ խոստովանում է, թե հանգավորումով ինքը հետեւել է «լալեաց բանաստեղծութիւն» եղանակողներին: Նա իրեն հանդես է բերում իբրեւ մի եղերամայր, որ գլուխն անցած «ակմբից դասու այնր երախանաց»՝ ողբականներին պատշաճ հեծությամբ եւ «աւաղական ձայնակրութեամբ» պարզում է իր հոգու վշտակրությունը:

Ժողովրդական ողբասացության հետ նույնպիսի աղերս, եւ այն էլ ավելի զորեղ կերպով, նկատելի է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ», Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի Ս. Կաթուղիկէն», Գրիգոր Տղայի «Բան ողբերգական վասն առման Երուսաղեմի» քերթվածներում: Սրանցում, որպես այս երեքին էլ բնորոշ ընդհանուր հատկություն, նվաճված, գերված եւ ավերված քաղաքը հանդես է գալիս դիմառնաբար՝ իբրեւ մի որդեկորույս մայր, մի եղերամայր, որը բացի հարազատներից, զրկված լինելով նաեւ երբեմնի վայելքներից ու ուրախություններից, որբերգու գուսանի պես ձայնում, պատմում է իր զրկանքների մասին, սգակիցներ է փնտրում, օգնություն հայցում: Նշված ողբերն այդ իմաստով, ասես, ժողովրդական երկարապատում լալյաց երգեր լինեն: Դրանք ընթերցողին սկզբից եւեթ մտովին տեղափոխում են թաղման հանդես, ուր կան ե՛ւ եղերամայր, ե՛ւ նրան լալակից ձայնարկուներ: Մի այդպիսի կատարյալ եղերամայր-արքայուհի է Ս. Կաթուղիկե տաճարը Օրբելյանի ողբում.

...Մերկ, խայտառակ ի բաթրոնին
Զանձամբ արկեալ զքուրձ խաւարին,
Հերքըն ճողեալ որպէս կընտին,
Ստինքըն ցամաք զերդ ըսկընդին,
Զկուրծքըն բախէր քարամբ ուժգին.
Առուք արեանց իջանէին:
Մոխիր կուտէր նըման բըլրին,
Ցանէր ձեռամբն ի գագաթին:
Երամք կանանց ճըչող ջայլից
Շուրջանակի զնա պատէին.
Դասք երգողաց կանգնեալ կային,
Զդամբանական փողս ածէին.
Աւաղական ողբովք լային,
Զգալարափողսըն հընչէին.
Կէսքըն շիւան մեծ քարշէին,
Կէսքըն զվարսիցըն փետէին:

(Ստեփանոս Օրբելյան, Ողբ ի Ս. Կաթուղիկէն, Թիֆլիս, 1885, էջ 25-26: Հետագա մեջբերումներն այս հրատարակությունից են):

Գրական ողբի հյուսվածքում կարեւոր դեր ունեն բանահյուսական ստեղծագործություններին հարազատ այլ առանձնահատկություններ: Որոշ երկերի սկզբում ընդգծվում է ձայնի սաստկությունը, զգացվում է տագնապալի շարժում, անհանգստություն, կարծես թե ողբագրի ականջին է հասնում բարձրականչ մի ձայն, որը պատմում է վերահաս տխուր մի իրողության մասին: Նման օրինակ է վերեւում արդեն հիշատակված Օրբելյանի ողբը:

Շարունակությունը՝ էջ 6

ԻՆՏՐԱՅԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Մանկավարժությունը զարգացման երկար ճանապարհ է անցել. ժամանակի ընթացքում փոփոխվել են ուսուցման եւ դաստիարակության ձեւերը, մեթոդներն ու բովանդակությունը: 19-րդ դարի վերջին արդեն այս գիտությունը բավարար ձեւավորում էր ստացել, սահմանել իր դրույթները, եւ դարաշրջանի ամենաշատ ուսումնասիրվողը լինելով՝ այնուհանդերձ ուսումնասիրման կարոտ գիտությունն էր: Այս ամենից, իհարկե, անմասն չէր նաեւ հայկական մանկավարժական միտքը, որի զարգացման գործում լավագույն դրույթների առաջարկման, աշակերտների նպատակասլաց ուսուցման, դաստիարակության եւ անհատի ձեւավորման ուսանելի մեթոդների հեղինակ էր բանաստեղծ, արձակագիր, իմաստասեր, հոգեբան, գեղանկարիչ ու մանկավարժ **Ինտրան** (Տիրան Չրաքյան, 1875-1921 թթ.): Նրա գրական գործունեությունը, չնայած կարճատեւ կյանքին, հարուստ էր ու բազմաժանր:

Հայտնի է, որ 1895-1915 թթ. Ինտրան ուսուցչությամբ է զբաղվել Կ. Պոլսի եւ գավառական վարժարաններում: Նրա՝ մանկավարժական գործունեության ընթացքում ձեւավորված հայացքներն ու առաջարկությունները լույս են տեսել «Արեւելք» թերթում՝ հոդվածների տեսքով: Դրանք կարծես զրույցներ լինեն. նախ հեղինակը ներկայացնում է ուսումնական որեւէ իրավիճակ, ապա իր կողմից առաջադրվող հարցադրումներով տալիս է դրանց պատասխանները: Ու թեեւ այդ պատասխաններից անցել է մեկ դարից ավելի ժամանակ, սակայն դրանք չեն դադարում լինել արդիական, մանավանդ որ այսօրվա ուսումնական համակարգի խնդիրները, չնայած որ զարգացման երկարատեւ ուղի են անցել, շատ քիչ են տարբերվում այն ժամանակվա խնդիրներից:



Ուշագրավ փաստ է, որ թեեւ նա դասավանդել է լեզուներ (հայերեն, ֆրանսերեն), սակայն նրա առաջ քաշած հարցադրումները վերաբերում են ընդհանուր կրթական համակարգին՝ առանց առարկայական սահմանափակման:

Ինտրայի մանկավարժական հոդվածներն առանձնանում են երկու խորագրով՝ «Նախակրթության սխալները» եւ «Կրթական հարցեր»: Առաջին բաժնում նա առանձնացնում է ժամանակի կրթական համակարգի սխալները, ապա վերհանում այդ սխալների պատճառները, բացահայտում դրանցից ծնվող հետեւանքները եւ վերջում առաջարկում լուծումներ եւ ապացուցում դրանց արդյունավետությունը:

Ըստ առաջ քաշած խնդիրների՝ նախ եւ առաջ հարկավոր է աշակերտների համար տարանջատել գլխավորը երկրորդականից: Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր աշակերտ դասագրքի ողջ պարունակությունն իմանա. բոլորը գիտնական չեն դառնալու: Շատ հավանական է, որ մեկը կդառնա առեւտրական, «... իսկ առուտուրին մէջ չեմ կարծեր որ նեղուին, չգիտնալուն համար օրինակի համար, թէ Հոլանտայի ո՛ր քաղաքները ինչ կարտադրեն, կամ քանի հազար բնակիչ ունին» («Արեւելք», 1902, մայիս, թ. 4942):

Ինտրան իր ժամանակի ուսուցման սխալներից է համարում «ցամաք» (ճշգրիտ գիտություններ) առարկաների էլ ավելի ցամաք դասավանդումը: Քանի որ այս առարկաները «յաւիտենապէս անհրապոյր եւ անգութ» են, ուստի ուսուցչից պահանջվում է այնպիսի մեթոդների գործածում, ինչը կստիպի աշակերտներին հետաքրքրվել այդ առարկաներով: Հատկապես մաթեմատիկայի դասերն են ամենաքիչը հետաքրքրում երեխաներին, քանի որ «բացարձակապէս ճիշդ գիտութիւն» է, իսկ աշակերտները, ըստ Ինտրայի, ճշտություն չեն սիրում, այսինքն՝ նրանց գունեղ երեւակայությունը չի կարողանում կաղապարվել հստակ կանոններով. «... իրենց համար ամէն ինչ մօտաւորապէս է»: Եվ գիտնական-մանկավարժ Ինտրան առաջարկում է իր տարբերակը՝ թվաբանությունն ու հարակից ճյուղերն ուսուցանել հատուկ հոգածությամբ՝ առանց պարտադրանքի: Պետք է թույլ տալ մտածել ինքնուրույն, բայց համակարգված, քանի որ նման առարկաների դասավանդման «գլխաւոր ու յամառ սխալը հոն է, որ տղան ինքնիրեն կը թողուի՝ սովրուած կանոնի մը, օրէնքի մը համեմատ մտածելու խնդրոյ մը վրայ» (տե՛ս նույն տեղում):

Ինտրան կրթական համակարգի հիմնական սխալներից է համարում էքսկուրսիաների եւ բացօթյա նախաճաշերի պակասը՝ հատկապես ցածր դասարաններում, քանզի նման կերպ փոքրիկներն ավելի շուտ ու ճիշտ կընկալեն աշխարհը: Ուստի նա առաջարկում է դասաժամերի բաշխման մեջ տեղ հատկացնել նաեւ զբոսանքներին՝ կարեւոր նկատելով նաեւ աշակերտների առողջապահական խնդիրները: Սակայն որքան էլ զբոսանքների ու էքսկուրսիաների դերն անժխտելի է, այնուամենայնիվ, դրանք չի կարելի թողնել կեսօրից հետո եւ ոչ էլ վաղ առավոտյան, քանի որ առավոտյան թարմությամբ պետք է ուսուցանել հատկապես լեզուներ, իսկ զբոսանքները կարելի է թողնել «յետճաշիկին»:

Ուսումնական համակարգի ոչ պակաս կարեւոր խնդիրներից են նաեւ դասագրքերի կազմումն ու դրանց ընտրությունը: Լավագույն կրթության գրավականը լավագույն դասագիրքն է, եւ իր ժամանակի կրթության համակարգի սխալներից է համարում ոչ լիարժեք, տվյալ տարիքային խմբին անհամապատասխան դասագիրքը:

Շարունակությունը՝ էջ 6

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻ ԵՎ ԱՌԱԾԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի է, որ դարձվածաբանությունը լեզվաբանության համեմատաբար երիտասարդ գիտաճյուղերից է, թեեւ դարձվածքների մեծ մասը գալիս է դարերի խորքից: Դարձվածքները կայուն, վերաիմաստավորված կապակցություններ են, որոնք չեն կազմվում խոսելու պահին, այլ մեջբերվում են որպես պատրաստի կառույցներ, օրինակ՝ *ձուկը գլխից բռնել, սար ու ձոր ընկնել, ավազի վրա տուն շինել, աչքը ծակ, աչքը ջուր կտրած...* Առածները ժողովրդական իմաստություններ են, որոնք ժամանակի ընթացքում խտացել, հղկվել ու բյուրեղացել են: Սրանք եւս խոսողը մեջբերում է պատրաստի, օրինակ՝ *տաշած քարը գետնին չի մնա, պտղատու ծառին քար գցող շատ կլինի...* Դարձվածքների ու առածների այս հատկանիշներն էլ թերեւս բանասիրական տարբեր վերլուծությունների ու գնահատումների պատճառ են դարձել:

Ուսումնասիրողների մի մասն այս երկու միավորները նույնացրել է, մյուս մասը՝ տարբերակել՝ փորձելով գտնել դրանք զանազանող հատկանիշները: Թե՛ դարձվածքները, թե՛ առածներն ու ասացվածքները էապես կապված են ժողովրդի մշակույթին, պատմությանը, ավանդույթներին ու սովորույթներին, կենցաղին, բնակության վայրի աշխարհագրական պայմաններին, լեզվամտածողությանը, ուստի դրանց ուսումնասիրությունն այդ ամենի վերաբերյալ հարուստ նյութ է վերհանում:

Դարձվածային միավորներին որոշ չափով նմանվում են նաեւ ասացվածքները, սակայն սրանք ոչ միայն դարձվածքներից, այլեւ հենց առածներից տարբերվում են մի հատկանիշով: Հայ ժողովրդի առածներն ու ասացվածքները հանգամանորեն ուսումնասիրած Ա. Ղանալանյանը իր «Առածանի» գրքի ներածության մեջ հետեւյալն է գրել. *«Բովանդակության, ձեւի ու ծավալի տեսակետից մոտ եւ նման լինելով միմյանց՝ ժողովրդական առածներն ու ասացվածքները բնույթով տարբեր են իրարից: Մինչդեռ առածը այլաբանական ստեղծագործություն է, որի բուն միտքը արտահայտված է անուղղակի կերպով, ասացվածքը իրականությունը դրսեւորում է ուղղակի ձեւով»* (Ա. Ղանալանյան, Առածանի, Եր., 1960, էջ X): Իսկ դարձվածային միավորներին պարտադիր բնորոշ է վերաիմաստավորումը, ուստի ոչ փոխաբերական իմաստ ունեցող ասացվածքներն անշուշտ այս հատկանիշով էապես տարբերվում են ոչ միայն առածներից, այլեւ դարձվածքներից: Սակայն, ինչպես կտեսնենք, կա նաեւ մեկ այլ հանգամանք:

Դարձվածային միավորները դասակարգվում են տարբեր չափանիշներով, որոնցից մեկն էլ դասակարգումն է՝ ըստ ստորոգական հատկանիշի: Ըստ այս հատկանիշի՝ առանձնացվում են անվանողական, այսինքն՝ բառակապակցություն, եւ հաղորդակցական, այսինքն՝ նախադասություն դարձվածքներ: Պարզ է, որ առածների ու դարձվածքների տարբերակման խնդիրը վերաբերում է հաղորդակցական, այսինքն՝ նախադասություն դարձվածքներին, քանի որ առածներն էլ իրենց կառուցվածքով նախադասություններ են (միակազմ կամ երկկազմ, պարզ կամ բարդ): Կառուցվածքային այս ընդհանրությունը, ինչպես նաեւ փոխաբերական իմաստով օժտված լինելն իրոք որ առածների ու դարձվածային միավորների նույնացման կամ նմանեցման խնդիր կարող են առաջացնել: Իզուր չէ, որ Խ. Բադիկյանը, հանգամանորեն քննելով դարձվածային միավորները առածներից ու ասացվածքներից սահմանազատելու հարցը, գրում է. *«Այս հարցը եւս դարձվածաբանության դժվար հարցերից է, թերեւս՝ ամենադժվարը: Թեեւ լեզվաբաններից շատերը դարձվածների ուսումնասիրման սայթաքարը համարում են ԴՄ-ի եւ բառի սահմանազատումը, բայց մեր կարծիքով՝ ավելի դժվար հարց է դարձվածի եւ առածների ու ասացվածքների տարբերակումը»* (Խ. Բադիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 83):

Եթե առանձին-առանձին քննենք առածներն ու դարձվածքները, ապա հնարավոր է գտնել մի շարք հատկանիշներ, որոնք կարող են տարբերակիչ լինել այս երկու միավորների համար, սակայն մեր կարծիքով՝ հարցը պետք է լուծել այլ մոտեցմամբ:

Որպեսզի համեմատենք եւ նույնացնենք կամ տարբերակենք երկու իրողություն, ապա դրանք պետք է նույն մակարդակի միավորներ լինեն եւ համեմատվեն միեւնույն չափանիշով: Օրինակ՝ բառը կարելի է համեմատել մեկ այլ բառի, բայց ոչ, ասենք, բարդ ստորադասական նախադասության հետ, որը ոչ թե բառագիտական, այլ շարահյուսական միավոր է: Հետեւաբար դարձվածքներն ու առած-ասացվածքները համեմատելու համար պետք է որոշել, թե դրանք ինչ միավորներ են, եւ որ չափանիշով ենք կատարելու համեմատությունը՝ իմաստայի՞ն, կառուցվածքայի՞ն, թե՞ մեկ այլ: Այս մոտեցմամբ հարցը քննելիս պարզ է դառնում հետեւյալը: Ա. Ղանալանյանն իր վերը նշված աշխատության մեջ գրում է. *«Առածներն ու ասացվածքները պատկանում են ժողովրդական բանահյուսության վիպական ժանրին: Ի տարբերություն նույն վիպական ժանրի մյուս ստեղծագործությունների, որոնց մեջ կյանքի երեւույթներն ու հարաբերությունները պատկերվում են ավելի կամ նվազ ծավալուն սյուժեի միջոցով, առածների ու ասացվածքների մեջ այդ արվում է չափազանց սեղմ բանաձեւ ընդհանրացումներով»* (Ա. Ղանալանյան, Առածանի, Եր., 1960, էջ X): Այսինքն՝ առածներն ու ասացվածքները բանահյուսական ժանրի յուրահատուկ ստեղծագործություններ են: Իսկ ի՞նչ միավորներ են դարձվածքները:

Դարձվածքները համարվում են լեզվական միավորներ, թեեւ դարձվածաբանության տեղի վերաբերյալ կան տարակարծություններ: Լեզվաբանների մի մասը դարձվածաբանությունը քննում է բառագիտության մեջ, իսկ մյուս մասը՝ շարահյուսության: Այստեղ չանդրադառնալով այդ հարցի մանրամասներին, քանի որ դա մեր նպատակը չէ, ուշադրություն հրավիրենք միայն այն հանգամանքին, որ երկու դեպքում էլ դարձվածքները համարվում են լեզվական միավորներ: Ընդհանրապես դարձվածքներն ուսումնասիրվում ու դասակարգվում են լեզվաբանական չափանիշներով, ինչպես օրինակ՝ ըստ բաղադրիչների կապակցվածության աստիճանի, ըստ բաղադրիչների քանակի, ըստ որեւէ խոսքի մասի հարաբերակից լինելու, ըստ ստորոգումային հատկանիշի եւ այլն:

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ. ԳՅՈՒՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Հեքիաթը շինված ըլլալու է մարդերէն շատ առաջ...
Յ. Օշական

Բանալի բառեր - *Հեքիաթ, գյուղաշխարհ, հայրենի տուն, տոներ, բարքեր, սովորույթներ, ավանդազրույց, իրական կյանք, ազգային ցավ*

Օշական արվեստագետի աշխարհընկալումը եւ գեղարվեստական մտածողությունը արտահայտված են նաեւ նրա «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուում, որն առաջին անգամ լույս է տեսել 1922 թվականին Կ. Պոլսում: Թեպետ գրվածքների մեծ մասն ունի «Հեքիաթ» ենթավերնագիրը կամ պարզապես վերնագրված է «Հեքիաթ», այս գործերը, սակայն, անվերապահորեն հեքիաթ համարելն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ գիտական գրականությունից մեզ հայտնի է, որ հեքիաթը ֆանտաստիկ, արկածային, երգիծական բնույթի ստեղծագործություն է, որը չնայած հիմնվում է իրականության վրա, սակայն պատմվում է ոչ որպես իրականություն *(տե՛ս Նվարդ Վարդանյան, Հայոց իրապատում հեքիաթը, Եր., 2009, էջ 16)*: Օշականը նույնպես իր «Երբ պատանի են», «Երբ պզտիկ են», «Հինէն ու նորէն», «Կայսերական յաղթերգութիւն», «Վկայութիւններ», «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուները համարում է վիպակներ *(տե՛ս Յ. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, 1982, էջ 117)* եւ «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուն գնահատելիս գրում. «Առանձին եղանակ մը, իրենց մեծ մասին մէջ, հեքիաթ մը շատ մօտիկէն յիշեցնող, որ նոյն ատեն կը քսուի համբաւաւոր արձակ քերթուածին, վտանգելու չափ պատումին հիմնական առաքինութիւնը, թուելով զառածիլ դէպի արձակ նկարագրումը, բայց մնալով վտանգէն ասդին» *(նույն տեղում, էջ 117)*: Գրականագետները նույնպես այս ժողովածուին ժանրային տարբեր բնորոշումներ են տալիս: Կիմ Աղաբեկյանն Օշականի «Խորհուրդներու մեհեանը» համարում է հեքիաթ-պատմվածքների շարք եւ նշում, որ «հեքիաթ» եւ «պատմվածք» բառերն օգտագործվում են թեական, ոչ ճշգրիտ իմաստով: Նա կարծում է, որ ներքին բովանդակությամբ եւ գեղարվեստական կատարման առումով պատմվածքների այդ շարքերը կազմում են հատվածայնությամբ գրված վիպական մի ամբողջություն *(Կիմ Աղաբեկյան, Հակոբ Օշական, Եր., 2006, էջ 72)*: Վ. Գաբրիելյանը գրում է, որ հիշյալ երկերը հեռանում են պատմվածքի ժանրից՝ հակվելով դեպի տպավորապաշտ արձակ բանաստեղծության ժանրը *(Վազգեն Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, Եր., 2008, էջ 56)*: Ինչեւէ, մեր նպատակը ոչ թե այս ժողովածուի ժանրային խնդիրներին, այլ նրանում առկա ավանդազրույցներին՝ գյուղի հեքիաթին անդրադառնալն է:

Ժողովածուն ունի «Մահուան ծաղիկներ» վերնագրված շարք, որի առաջաբանում Օշականը պատմում է իր կյանքի ողբերգական դրվագները, այն տարիները, երբ թուրքական իշխանությունից խույս տալու համար թաքնվում էր նույնիսկ անծանոթների տներում եւ մի հնարքով փրկվում:

Ինչպես հեքիաթն է ընդհանրապես ժողովրդի մտքի, հոգեկան աշխարհի, երազանքների ու ձգտումների արտահայտություն, այնպես էլ Օշականի «հեքիաթները» դարձան գրողի աշխարհայացքի եւ ներաշխարհի արտահայտություն: Հիշելով տարիներ առաջ իրեն եւ «իրպէսներուն» հեքիաթներ պատմող կույր հորաքրոջը՝ Օշականը «Կաղանդի հեքիաթ» երկում գրում է. «Ան հովերուն թեւ կու տար, ամպերուն՝ ձայն ու կրակ» *(Յակոբ Օշական, Երկեր, Անթիլիաս-Լիբանան, 1998, էջ 373)*: Եվ Օշականը պատմում է իր գյուղի հեքիաթը՝ թեւ տալով հովերին, ձայն ու կրակ՝ ամպերին: Նա պատմում է «... շատ մը հեքիաթներ, որոնք իրական ու անիրական կեանքին մէջտեղը կը ծփան» *(Յ. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, 1982, էջ 108)*:

Որպես ընդհանուր երեւույթ՝ նշենք, որ Օշականի հեքիաթները հիմնականում ունեն որոշակի սկիզբ, որը բուն հեքիաթին նախորդող հատվածն է: Դրանցում Օշականը խոսում է իր գյուղի որեւէ տեղանվան մասին (Աղուընակ-Քար, Իզնիկի լիճ, Աւետում-Աղբիւր, Աւազանի անտառ եւ այլն) կամ նկարագրում տարածված որեւէ տոն, ապա հորաքրոջ, ձկնորսի, բարի պառավի կամ «մամերի» բերանով պատմում է դրանց առնչվող ավանդություններ՝ մտքով ետ գնալով դեպի հայրենի Սեղլեզ գյուղ:

Օշականի հեքիաթները կյանքի եւ մահվան փոխհարաբերության, հավերժական սիրո, մարդկային արժեքների եւ հարաբերությունների, կնոջ առեղծվածի, ազգային ցավի մասին պատմող պատմություններ են՝ փիլիսոփայական հարցադրումներով: Եվ եթե փորձենք թեմատիկ առումով խմբավորել դրանք, ապա կարող ենք առանձնացնել մի քանի խումբ. խոհափիլիսոփայական հեքիաթներ, գյուղի տոների, բարքերի ու սովորույթների մասին պատմող հեքիաթներ, հայ ժողովրդի ճակատագիրը քննող հեքիաթներ:

Օշականն իր հեքիաթներում անդրադարձել է աշխարհստեղծման պատմությանը («Ինչո՞ւ կը մեռնինք»), փորձել գեղարվեստորեն պատկերել այդ ընթացքը: Աստծու եւ սատանայի երկխոսությունների, նրանց խոհերի միջոցով գրողը փորձում է գտնել շատերին հուզող հարցերի պատասխանները. ի՞նչ է կյանքը, ինչո՞ւ են մարդիկ մեռնում, ինչո՞ւ է մարդն իր ունեցածը գնահատում այն կորցնելուց հետո միայն, ո՞րն է մարդ արարածի կոչումը, ինչի՞ համար են ցավն ու տառապանքը, ինչո՞ւ է սերը զուգորդվում մահվան հետ, ո՞րն է ամենածանր կսկիծը, ի՞նչ է պետք առհասարակ մարդուն եւ այլն: Գտնելով այս հարցերի պատասխանները՝ գրողը պատգամում է ապրել Աստծո պատվիրաններով. «Սիրի՛ր մերձավորիդ այնպես, ինչպես քո անձը»:

Մարդկային բախտի եւ ճակատագրի հարցերը քննելիս («Ինչո՞ւ կը մեռնինք», «Արեւն ու լուսնկան») Օշականը կարծում է, որ մարդը չի կարող փոխել իր ճակատագիրը, բայց կարող է ազդել նրա վրա: *(Իր «Համապատկեր»-ում Օշականը գրում է, որ 1915 թ. Պոլսում, ոստիկաններից գիշեր ու ցերեկ հալածված, կամրջից ուզում էր ցած նետվել, բայց մի անծանոթ ձեռք, որը ճակատագրի ձեռքն էր, կանգնեցնում է նրան:*

Թուրք ոստիկանը նրան է մեկնում մի թուղթ, որի վրա գրված էր իր անունը, եւ հարցնում, թե ճանաչո՞ւմ է արդյոք այդ մարդուն: Օշականը ձեռքով ցույց է տալիս մի անծանոթի եւ հեռանում կամրջի հակառակ ուղղությամբ: «Ճակատագրի մատն էր, որ կը միջամտէր այսպէս:

Շարունակությունը՝ էջ 8

ԻՆՏՐԱՅԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 4

Շարունակելով իր մտածումներն արտահայտել՝ Ինտրան թվարկում է դպրոցական մի շարք առարկաների ուսուցում, որոնց թերի վիճակը կամ իսպառ բացակայությունը մտատանջությունների տեղիք են տալիս: Կրթական համակարգի կարեւորագույն խնդիրներից է համարում արվեստին դասաժամեր չհատկացնելը կամ դրա նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքը: Այսպես, օրինակ, ճարտարագործության ուսուցմանը տեղ չհատկացվելու կամ ճարտարագիտության նկատմամբ ճաշակ չձեւավորվելու պատճառով երեխաներն ունենում են ընդգծված դրական վերաբերմունք դեպի առեւտրական գործունեությունը: Թեեւ Ինտրան այս խնդիրը հիմնականում բացատրում է իր ժամանակի հրամայականով, սակայն, այնուամենայնիվ, մերժում է այդ մոտեցումը: Ճիշտ նույն պատճառով ուշադրությունից դուրս է մնացել երկրագործական գիտելիքների ուսուցումը, իսկ երկրագործությունը «խաղաղութեան եւ առողջութեան արուեստն է»: Այս ամենի շարքը համալրում է երգի ուսուցումը. «Օ՛հ, դեռ որքան վայրենի է այս դասը»,- այսպես է արտահայտվում Ինտրան երգեցողության դասավանդման մասին: Պարտադիր չէ, որ բոլորը լավ ձայն ունենան երգելու համար. աշակերտներին պետք է սովորեցնել երգի միջոցով արտահայտել իրենց զգացմունքները: Եթե այս բոլոր առարկաների դասավանդման մասին Ինտրան արտահայտում է իր կարծիքը, ապա կրոնի դասավանդման եւ այս առարկայի նկատմամբ ժամանակակիցների վերաբերմունքը վիրավորում է նրան: Վարժարանների տնօրենները շատ հաճախ հրաժարվում էին այս առարկային դասաժամ հատկացնել. «Իրե՛նք նախ կարհամարհեն այդ դասը՝ ինչպէս խոզը մարգարիտը կարհամարհէ»: Մինչդեռ կրոնի ուսուցիչը պետք է որ աշակերտներին «խանդավառող ըլլայ կրօնական եւ բարոյական իրերով», հակառակ դեպքում կտապալվի ամբողջ ուսուցումը:

Ինտրայի մանկավարժական հիմնական հայցքներն արտահայտվել են «Կրթական հարցեր. Դասաւանդութեանց մասին ինչ-ինչ խորհրդածութիւններ» խորագրի տակ («Արեւելք», 1902, օգոստոս, թ. 5018): Եթե «Նախակրթութեան սխալները» բաժնում նա անդրադառնում է դպրոցավարության մեջ ընդունված սխալներին եւ փորձում դրանք ուղղելու որոշ ուղիներ մատնանշել, ապա այս բաժնում ուշադրությունը սեւեռել է ուսուցման մեթոդների վրա եւ պահանջում է բարեփոխումների ծրագրեր իրականացնել: Այստեղ արծարծված խնդիրներին իր տված լուծումները կարծես լրացնում են «Նախակրթութեան սխալներ»-ին: Ըստ Ինտրայի՝ ուսուցման համակարգում առաջին մերժելի հատկանիշը հարկադրաբար պարտականությունները կատարել տալն է, քանզի հենց պարտադրանքն էլ ծնում է բազում խնդիրներ՝ անհետաքրքրություն առարկայի նկատմամբ, ոչ նստվածքային գիտելիքներ, առաջադիմության անկում: Մինչդեռ այդ ամենից կարելի է խուսափել, եթե ընդունվի գիտելիքները դասաժամին հանձնարարելու, ամրապնդելու եւ արտահայտելու ուղին: Որպես օրինակ այս անգամ բերում է «սրբագրութիւնը»՝ ուղղագրության ուսուցումը: Ի հեճուկս «ցամաք» առարկաների՝ ուղղագրության ճիշտ ուսուցման համար հնարավոր է համարում բազմաթիվ մեթոդների կիրառումը, քանի որ ընդհանրապես լեզուների նպատակասլաց ուսուցման համար մեթոդների ընտրությունը մեծ է՝ բնագիտական առարկաների համեմատ: Նա առաջին հերթին առանձնացնում է գրավոր եւ բանավոր սխալները եւ առաջարկում դրանց ուղղման իր տարբերակները: Ու թեեւ Ինտրան բնական է համարում աշակերտների բազմապիսի սխալները, բայց առաջարկում է դրանց նկատմամբ տարբեր մոտեցումներ ցուցաբերել: Գիտելիքների գրավոր ստուգումներում մեծ է իրարից ընդօրինակելու հավանականությունը, իսկ բանավորի ժամանակ շահում են շուտ անգիր սովորելու ընդունակություն ունեցող աշակերտները, ովքեր առանց խորամուխ լինելու առաջադրվող հարցերում՝ բերանացի կրկնում են նախորդների պատասխանը կամ ուսուցչի խոսքը: Հետեւաբար Ինտրան հայոց լեզվի գիտելիքների ստուգման լավագույն տարբերակ է համարում գրավոր եւ բանավոր խոսքերի տարանջատումը: Սակայն երկուսի դեպքում էլ ուսուցման ամենաարդյունավետ մեթոդը դասաժամին ուղղակի ուսուցանելն է՝ ուսուցչի անմիջական հսկողությամբ աշակերտներին ստեղծագործելու մղելը, սրբագրական եւ ընդհանրապես մտավոր աշխատանք կատարելը: Իսկ գրավոր խոսքի լիարժեք ուսուցման կարելի է հասնել միայն բանավոր խոսքի կատարյալ տիրապետման դեպքում: Որքան էլ գրավոր աշխատանքում ուսուցիչը «գիծեր քաշէ» սխալների վրա, միեւնույն է, արդյունք չի լինի, եւ սխալը կկրկնվի, եթե բանավոր խոսքում չեն ամրագրում կամ չեն փորձում ուղղել դրանք:

Իր առաջարկած դրույթներով Ինտրան դեռեւս 19-րդ դարի վերջին արծարծում է հարցեր, որոնք մինչ օրս էլ արդիական եւ լուծում պահանջող խնդիրներ են: Խոսքը վերաբերում է հնչյունի եւ տառի գրության անհամապատասխանությանը որոշ բառերի գրության մեջ: Սկսնակ աշակերտի համար չափազանց դժվար է սովորել տառանունները եւ դրանք գործածել ոչ համապատասխան հնչյունի գրության համար. «Երբ տղաք տառերը սորված են իրենց անուններով այբ, բեն, գիմ, դա եւ այլն, բնական կդառնայ, որ բէ ձայնը գրելու համար բ տառը գործածեն, եւ ոչ փ...» (նույն տեղում): Անշուշտ այս հարցն արեւմտահայ գրական լեզվում ավելի լուրջ խնդիր է, քան արեւելահայ լեզվում, եւ մանկավարժ-գիտնականին չէին կարող չանհանգստացնել լեզվական այդ խնդիրները, որոնք, ցավոք, մինչ օրս էլ կարիք ունեն քննության: Շարունակելով նմանօրինակ բառերի ու լեզվական իրողությունների թվարկումը՝ Ինտրան նշում է ուղղագրական բազում սխալներ, որոնք, սակայն, հենց բանավոր խոսքի սխալների արդյունք են, եւ առաջարկում է ուղղագրության ուսուցումն սկսել բանավոր խոսքից՝ ուղղախոսությունից, այսինքն՝ նախ օգնել աշակերտներին ճիշտ խոսել՝ ուղղախոսական կանոններին համապատասխան, եւ ապա անցնել ուղղագրական կանոնների ուսուցմանը: Իր ժամանակի համար Ինտրայի այս մոտեցումը նորարարություն էր հայ մանկավարժության համար: Բանավոր սխալ խոսքի ուսուցման արդյունքում ձեւավորված գրավոր թույլ խոսքը մինչ օրս էլ մեր ուսուցման համակարգի խոցելի խնդիրներից մեկն է: Այս ամենի լուծման տարբերակներից Ինտրան նախընտրում է մեկը. «Մեծ տրամագիծով սրատեսութիւն մը եւ կեդրոնացուցիչ, խտացուցիչ եւ լուսաւորող յուրայատկութիւն մը» ունեցող ուսուցիչ, ով «անընդհատ պէտք է ժամանակին հասնի, սխալը դեռ չգոյացած, չեզրակացուած, չօրինացած. կարելի է ըսել թէ իր աւանդները պէտք է ամլացնէ՝ ուտիչ, այլափոխիչ մանրէներու հարձակումէն» (նույն տեղում):

Ինտրայի առաջարկած բազում բարեփոխումների շարքում, սակայն, միայն հայոց լեզվի ուսուցման սխալները չէին, այլեւ՝ օտար լեզուների: Իր մանկավարժական գործունեության ընթացքում հանդիպած ուսուցման համակարգի բոլոր խնդիրներին նա անդրադարձել է իբրեւ մանկավարժ-գիտնական եւ ամենայն հոգածությամբ փորձել է ուղիներ գտնել՝ հայկական կրթական համակարգի բարելավման եւ լավագույն դպրոց ունենալու երազանքով:

Լիլիթ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայրենասիրական ողբը

Սկիզբը՝ էջ 4

Կարեւոր դեր ունեն նաեւ անեծքը եւ բնությունն իբրեւ զգացող, մարդկային վիճակն ըմբռնող էակ անձնավորելու գեղարվեստական պատկերավորման եղանակները, որոնք դարձյալ ծագում են ժողովրդականից: Անեծքը զորեղ միջոց է եղել մերկացնելու, դատապարտելու եւ դատաստան կարդալու մահառիթ ուժերին: Անեծքին իր ողբում մեծ տեղ է հատկացրել Ներսես Շնորհալին: Բերենք մի օրինակ.

... Արդ եղիցիս դու հալածեալ,
որպէս փոշի հողմով հոսեալ.
Ի հրեշտակէն Տեառըն նեղեալ,
իբրեւ զդեւս անհետ եղեալ.
Եւ ճանապարհ քո խաւարեալ,
յաջ եւ յահեակ զքեւ պաշտպանեալ.
Արագապէս փոյթ ժամանեալ,
քեզ որոգայթ անգիտացեալ.
Որսըն զոր ինձ գաղտ թաքուցեալ,
առցէ զուրխքըդ խորտակեալ,
Ի գուբ խորին ապականեալ,
իջցես դու անդրը կորուսեալ.
Իբր զԴադան գետին կըլեալ,
Կորխ 'ւ Աբիրոն յերկրէ ծածկեալ,
Քանզի քեզ այն բաժին հասեալ,
արյիւնահեղ նենգով լցեալ.
Սրով արեւդ պակասեալ,
Լիցի տանեայ խոր ցամաքեալ:

(Ներսես Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, Եր., 1973, էջ 90-91: Հետագա մեջբերումներն այս հրատարակությունից են):

Սակայն որքան էլ ժողովրդական սգո ծեսը եւ նրա անհրաժեշտ մասը՝ բանավոր ողբը, նշանակություն են ունեցել գրական ողբի առաջացման ու զարգացման խնդրում, այնուամենայնիվ, վերջինս անհատական ստեղծագործություն է եւ, որոշակի կողմերով ու բաղադրիչներով նմանվելով ու առնչվելով հանդերձ, տարբերվում է նրանից թե՛ նյութի նկատմամբ իր հայացքով եւ թե՛ պատկերվող իրականության ընդգրկման ավելի լայն սահմաններով: Եթե ժողովրդական ողբը թաղման ծեսից անջատ պատկերացնել հնարավոր չէ, ապա գրական ողբը ոչ մի կապ չունի սգո արարողության հետ: Ողբերգության թեման չի սահմանափակվում սոսկ վախճանվածի հիշատակի եղերգումով, քանի որ դա նրա ընդարձակ թեմատիկայի միայն մի նեղ բնագավառն է: Նրան զբաղեցնում են ոչ միայն այդ, այլեւ ուրիշ իրողություններ, ուրիշ երեւույթներ, որոնք ողբերգական բնույթ ունեն: Ողբի նյութ կարող են լինել ոչ միայն եկեղեցական, քաղաքական կամ մշակութային ականավոր դեմքերի կորուստները, այլեւ մի ժողովրդի ազգային-քաղաքական կյանքում տեղի ունեցած արշավանքները, ասպատակությունները, կոտորածները, երկրին ու ժողովրդին դրանց պատճառով հասած դառնություններն ու դժբախտությունները, գերությունները եւ այլն: Այս դեպքում տխրական դեպքը դուրս է բերվում տեղային նեղ ոլորտից եւ դիտվում իբրեւ ընդհանուր ժողովրդյան, ողջ երկրի համար կարեւորություն ներկայացնող փաստ: Ողբագրի խոսքը հասցեագրվում է համայն մարդկությանը, ընթերցողներին:

Կարելի է ողբասացությունը, ըստ Պողոս Խաչատրյանի, բաժանել թեմատիկ հինգ մեծ խմբի: Դրանք են՝ 1) անձնական-քնարական, որի մեջ մտնում են այն բոլոր ողբերը, որոնցում արտահայտված է միջնադարյան անձուկ պայմաններում անհատի հոգեվիճակը (Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան), 2) դամբանական, 3) գերեզմանական, 4) բնական աղետների առթիվ ստեղծված ողբեր եւ, վերջապես, 5) պատմական:

Սրանց առաջատար տեսակը, հիրավի, պատմական թեմայով ողբն է:

Շարունակելի

Վարդան ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ավանդաբար հուշագրությունը, մեմուարային գրականությունը, պամֆլետն ու ֆելիետոնը, ինչպես նաեւ ակնարկը՝ իր բազում տարատեսակներով, համարվում են ակնարկային գրականություն: Սակայն հիշատակված ժանրերից յուրաքանչյուրը պատմական զարգացման ուրույն ուղի է անցել՝ որպես կանոն ընդլայնելով ժանրի սահմանները: Հուշագրությունը վավերագրական ժանրի տարատեսակներից է, որի արմատները հեռավոր անցյալում են: Դեռ հնագույն ժամանակներում եղել են զանազան հուշարձանային մակագրություններ, պատմական գրանցումներ, «որոնք նպատակ ունեին ամրացնել, սերունդներին հասցնել մարդկանց հիշողությունը իրենց մասին, այս կամ այն նշանավոր դեպքի մասին» *(տե՛ս Գրական ժանրեր. պատմական զարգացումը եւ ժամանակակից վիճակը,* ***Համիկ Մարգունի***, Եր., 1973, էջ 473-474):

Այսպիսի ընդհանուր բնորոշումը պայմանավորված է նրանով, որ անտիկ շրջանում հիմնականում զարգանում էին (երբ պատմագրությունը վերածվել էր արդեն առանձին ճյուղի) հուշագրության առաջին նմուշները (կենսագրություններ, նամակագրություններ, պատմություններ): Ավելին՝ վաղ շրջանի գրեթե բոլոր ստեղծագործողների երկերում «անձնական հիշողությունների՝ որպես պատմական վկայությունների, օգտագործումը դառնում է տարածված երեւույթ (Քսենոֆոն, Կեսար, Եղիշե, Մ. Խորենացի, Ղ. Փարպեցի)» *(նույն տեղում, էջ 474)*: Հասկանալի է, որ այդ երկերում գերակշռում էր ճանաչողական, ինֆորմացիոն տարրը, սակայն նկատելի էին նաեւ գեղարվեստական-գեղագիտական որոշակի միտումներ, որոնք աստիճանաբար դուրս էին մղում դեպքերի պարզագույն շարադրանքը, տարեգրությունը: Հուշագրական բոլոր տիպի ստեղծագործություններն ընթերցողի համար հետաքրքիր են ոչ միայն տվյալ հեղինակի անձնական ապրումների, մանրամասների տեսանկյունից, այլեւ (երբեմն՝ հենց առաջին հերթին) ժամանակի առանձին իրադարձությունների, նշանավոր դեպքերի եւ անձանց մասին պարունակած իրենց ինֆորմացիայով: Այս հանգամանքն է նկատի ունեցել Գերցենը, երբ, գնահատելով Բ. Չելլինիի մեմուարները, գրում է. «Բ. Չելլինիի մեմուարները հետաքրքիր են ոչ թե նրա համար, որ նա խոշոր արվեստագետ էր, այլ նրա համար, որ նա շոշափում է վերին աստիճանի հետաքրքիր հարցեր» ***(А. И. Герцен,*** Собрание соч., т. 8, М., 1956, стр. 205):

Համաշխարհային եւ հայ գրականության բազում օրինակներից պարզ է դառնում (Գյոթե, Հայնե, Գերցեն, Տոլստոյ, Դոստոեւսկի, Աղայան, Պռոշյան, Շիրվանզադե, Օտյան), որ այս ժանրի ստեղծագործությունները դառնում են ժամանակաշրջանի իրական հայելին՝ տարբեր չափերի հասնող մանրամասներով ներկայացնելով դարաշրջանը եւ ժամանակակիցներին: Իհարկե, ասվածից չպետք է եզրակացնել, թե հուշագրություններում բացակայում են անձնական հոգեկան դրաման, շարադրանքի քնարականությունը:

Հայ գրականության մեջ նույնպես հուշագրության ժանրը անցել է պատմական զարգացման ուրույն ուղի՝ տարանջատվելով պատմագրությունից: Կ. Դանիելյանն իր «Հայ մեմուարային գրականության պատմությունից» (Եր., 1961) գրքում իրավացիորեն նկատում է, որ այս ժանրը արդեն 19-րդ դարում տալիս է իր դասական նմուշները:

Մեր գրականության մեջ երեւացին հուշագրության տարբեր տեսակները, որոնցից ամենապարզը օրագիրն է, եւ որի առաջին նմուշը տալիս է Խ. Աբովյանը («Դորպատյան օրագրերը»): Այստեղ անձնական կյանքի փաստերի գրանցումը, մարդկանց հետ հանդիպումների մասին պատմությունները դառնում են գեղարվեստական գործ, քանի որ հեղինակը, օժտված գեղարվեստական ձիրքով, կարողանում է այդ բոլորին հաղորդել հուզականություն, հոգեկան դրամատիզմ եւ ռոմանտիկ պաթոս: Հետագայում Ղ. Աղայանը («Իմ կյանքի գլխավոր դեպքերը»), Պ. Պռոշյանը («Հուշիկները»), Շիրվանզադեն շարունակեցին հայ մեմուարային գրականության ուղին՝ իրենց հուշագրական երկերում տալով նաեւ ժամանակի հայկական հանրային ու գրական կյանքի ամբողջական պատկերը, շարունակեցին հայ մեմուարական գրականության ուղին: Ավելի ուշ Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը, Ս. Զորյանը իրենց բազում հուշերում ընդլայնեցին ժանրի սահմանները՝ դառնալով ե՛ւ իբրեւ ականատես-վկա, ե՛ւ նուրբ վերլուծաբան, ե՛ւ կողմնակի «աչք», ե՛ւ գրող-արվեստագետ:

Ասվածից կարելի է գալ այն համոզման, որ բոլոր դեպքերում, իսկապես տարանջատվելով պատմագրությունից, հուշագրությունը պատմական զարգացման ողջ ընթացքում հենված է փաստի վրա՝ պահպանելով նաեւ իր ինֆորմացիոն-ճանաչողական նշանակությունը: Նորից պիտի նկատենք, որ անցած դեպքերի ու դեմքերի հետ կապված մանրամասների վերարտադրումը կազմում է հուշագրության հիմնական գործառույթը, քանի որ այս դեպքում հեղինակի «երեւակայությունը» էական եւ նպաստող դեր չի կատարում. «Վերստեղծված կերպարներում եւ հարաբերություններում եթե նույնիսկ հանդես է գալիս երեւակայությունը, ապա այն չի կազմում հուշագրության որոշիչ գիծը: Տիպականը սերտորեն կապվում է ստույգի հետ» *(Գրական ժանրեր. պատմական զարգացումը եւ ժամանակակից վիճակը,* ***Համիկ Մարգունի***, Եր., 1973, էջ 493): Եվ, չնայած սրան, քանի որ հուշագրության մեջ պատումը տարվում է հեղինակի անունից, եւ սյուժետային զարգացումը պայմանավորված է ոչ թե գեղարվեստական պայմանականությունների տրամաբանությամբ, այլ ինքնակենսագրական, ժամանակագրական փաստերի հաջորդականությամբ, ապա հուշագրությունների բովանդակային եւ իմաստային հագեցվածությունը պայմանավորված է հիմնականում հեղինակի անձնավորությունից, գեղարվեստական պատկեր ստեղծելու կարողությունից, ինչպես նաեւ նշանակալի փաստ ներկայացնելու հանգամանքից: Սա էլ իր հերթին նշանակում է, որ ներկայացվող, վերարտադրվող իրադարձությունների, պատկերների վրա անխուսափելիորեն դրվում է հեղինակի անհատական կնիքը՝ առանձին դեպքերում դրանց հաղորդելով նաեւ սուբյեկտիվություն: Ստացվում է, որ հուշագրությունը գրականության համար արժեքավոր է դառնում միայն այն դեպքում, երբ հեղինակը՝ գրողը, նուրբ զգացողությամբ ընտրում է այն մանրամասները, որոնք հասարակական լայն լսարանի համար կարեւորություն են ներկայացնում՝ անգամ, եթե դրանք ներկայացվում են անձնական տպավորությունների, ապրումների հիման վրա:

Հուշագրության ժանրային առանձնահատկություններից է եւ այն, որ այլ ժանրի երկերի նման այստեղ եւս հեղինակը կարող է իր ուշադրության կենտրոնում պահել (հետեւաբար եւ ներկայացնել) հենց այն խնդիրները եւ ծրագրերը, որոնց լուծմամբ ինքը շահագրգռված է: Այս դեպքում հասկանալիորեն նեղացվում է ժանրի շրջանակը՝ նրան տալով ծրագրային մանիֆեստի, հրապարակախոսական ելույթի արժեք:

Հրապարակախոս Գրիգոր Արծրունու հուշագրությունը, որը զգալի տեղ է զբաղեցնում նրա գեղարվեստական ժառանգության մեջ, իր վրա կրում է հեղինակի ծրագրերի անմիջական կնիքը: Նրա հուշագրության մեջ (հատկապես «Մի տարի Շվեյցարիայում», «Փարիզից», «Վենեցիա») ոչ միայն նկատելի է ձգտումը՝ ընթերցողին կարեւոր ու օգտակար տեղեկություններ հաղորդելու, այլեւ հրապարակախոսի հետեւողական քաղաքականությունը՝ օրախնդիր հարցեր առաջ քաշելու վերաբերյալ: «Մշակի» էջերում բարձրաձայնած ամեն մի խնդրի վերաբերյալ Արծրունին աշխատում է օտարների օրինակները փոխանցել ընթերցողին՝ այդ կերպ ներկայացնելով նաեւ խնդրի՝ իր համար ցանկալի լուծումը:

Բավականին պատկառելի է Արծրունու հուշագրական ժառանգությունը՝ «Մի տարի Շվեյցարիայում» (1886), «Փարիզ» (1889), «Տպավորություններ» (1889), «Վենեցիա» (1890), «Երեւանյան նահանգում» (1890): Այս երկերի մեջ իր ե՛ւ ծավալով, ե՛ւ առաջ քաշած խնդիրների բազմազանությամբ առանձնանում է «Մի տարի Շվեյցարիայում» հուշագրությունը, որը «Մշակում» լույս տեսավ 1886 թ. հունվարի 5-ից մինչեւ դեկտեմբերի 23-ը (հ. 2-ից հ. 145):

Իրականում Արծրունին Շվեյցարիայում մեկ տարի անցկացրել էր 1884-1885 թվականներին, երբ ֆինանսական խնդիրների (Արծրունու եղբայրների ունեցած պարտքը) պատճառով Թիֆլիսում վաճառվում են Արծրունու եղբայրների պապական շինություններն ու հողերը: Ապարդյուն են անցնում նաեւ Հ. Առաքելյանի ու Աբել Ապրեսյանցի՝ հայ հասարակությունից Արծրունու համար օժանդակություն ստանալու (աճուրդի դրված շինությունները հետ վերցնելու) ջանքերը: Ֆինանսական խնդիրներն ազդում են նաեւ «Մշակի» հրատարակության վրա. 1884 թ. մարտի 7-ից թերթը լույս է տեսնում միայն շաբաթը երկու անգամ, իսկ հուլիսի 11-ին Արծրունին «Իմ բացատրությունս» առաջնորդողում ներկայացնում է իր նյութական վիճակը եւ երկու ամսով դադարեցնում թերթի հրատարակությունը: Ինչպես Արծրունու հավատարիմ կենսագիր Լեոն է նշել, նա բազում հոգսերի ու մտածմունքների մեջ քայքայել էր առողջությունը եւ Շվեյցարիա էր մեկնել հանգստանալու նպատակով. «Մշակը» նա տվեց Ռաֆֆիին, Գաբրիել Միրզոյանին եւ Ներսես Աբելյանին այն պայմանով, որ տարեկան 1000 ռուբլի ստանար: Այդ գումարով էլ նա հույս ուներ ապրել Շվեյցարիայում» ***(Լեո***, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., 1987, էջ 667): Կյանքի հենց այս շրջանն է ընկած քննվող հուշագրության հիմքում:

Շարունակելի

Արշալույս ԳԱԼՍՏՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ. ԳՅՈՒՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Սկիզբը՝ էջ 5

Անիկա յստակ կը կարդայ այդ մատի ցուցմունքը: Պարտաւոր էր ազատել իր գլուխը եւ ոչ թէ ջուրին յանձնել զայն» (Յ. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 10, 1982, էջ 118-ի տողատակ): Գրողը հակադրվում է այն տեսակետին, որ վրա հասած բոլոր դժբախտությունները պայմանավորված են մարդու ճակատագրով: Նա կարծում է, որ բոլոր աղետները ճակատագրի անունից գործում են մարդիկ. «Կ'ըսեն, թէ ճակատագիրը երբեմն աչքերը կը բանայ իր ահաւոր քունէն ու փայլակի մը մէջ կ'աշխատի դարմանել աղէտները, որոնք իր անունով, իր կամքովը, բայց առանց իր գիտնալուն գործուեցան մարդերուն մէջ» *(Յակոբ Օշական, Երկեր, Անթիլիաս-Լիբանան, 1998, էջ 402)*: Հավերժական սիրո թեման հայ եւ համաշխարհային շատ գրողների հոյակապ ստեղծագործությունների նյութ է դարձել: Հիշենք Հովի. Թումանյանի «Անուշ» պոեմը, երբ սիրահար զույգը մահից հետո ձուլվում է բնությանը, վերածնվում մի այլ ձեւի մեջ՝ երկնակամարում իրար միացող աստղերի զույգի: Նույն գաղափարն են արտահայտում Ավ. Իսահակյանի «Հավերժական սերը» բալլադը, Վ. Հյուգոյի «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպը եւ այլ ստեղծագործություններ: Այս թեմային անդրադարձել է նաեւ Օշականը («Աղուշնակքարը»)՝ ընդգծելով հատկապես սիրո տված ցավի մեծությունը. «Այնքան իրար ամուր փակած սիրողները, գերեզմանին խորը իրենց մոխիրին մէջ ալ պիտի շարունակէին տառապիլ ու ողբալ» (էջ 350):

Օշականը, ինչպես ուրիշ շատ գրողներ, փորձել է հասկանալ կնոջ հոգու անհատակ խորությունը, բացահայտել նրա առեղծվածը: Նա կատարում է հռետորական մի քանի հարցադրումներ, որոնց նպատակը ոչ թե պատասխան ստանալն էր, այլ դրանց միջոցով կին-առեղծվածի էության մեկնաբանումը. «Ինչո՞ւ անոնց աչքերը աւելի շուտ ու շատ կը խօսին, քան անոնց սիրտերը», «Ինչո՞ւ, ինչո՞ւ անոնք միշտ մետաղը (ոսկի - Մ. Ղ.) փնտռեցին», «Ինչո՞ւ անոնք վախցան հոգիին մերկութենէն ու խենթի պէս, խենթի պէս փնտռեցին պաշտպանութիւնը բեհեզին» (էջ 393): Այնինչ՝ երիտասարդ աղջնակի սիրտը անտես աղավնու նման պիտի թեւածի երկնքի լազուրներում, սիրած էակի հոգու մեջ պետք է մնա ինչպես առավոտվա ցողը, ինչպես թեթեւ շնչից խուսափող վայրի վարդը: Կնոջ մեծագույն առաքելությունը պետք է լինի զավակներ լույս աշխարհ բերելը, կյանք պարգեւելը, որովհետեւ զավակները մարդու կյանքում տվնջյան ու գիշերային լուսատուներ են՝ արեւ ու լուսին: Օշականը փորձում է պարզել նաեւ մոր ու զավակի միջեւ եղած անբացատրելի ու գերբնական կապը, փորձում է գտնել այն անտեսանելի թելերը, որոնք, չնայած բազում անջրպետների, միանում են իրար («Արեւն ու լուսնկան»):

Շարունակելի

Մարինե ՂԱՉԱՐՅԱՆ

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻ ԵՎ...



Սկիզբը՝ էջ 5

Մինչդեռ առածներն ու ասացվածքները՝ որպես բանահյուսական ժանրի ստեղծագործություններ, բոլորովին այլ մոտեցումներով են ուսումնասիրվում: Այսինքն՝ առածներն ու ասացվածքները բանահյուսական ժանրի ստեղծագործություններ են, իսկ դարձվածքները՝ լեզվական միավորներ: Հետեւաբար, մեր կարծիքով, ընդունելի չէ համեմատել բանահյուսական ժանրի ստեղծագործություններն ու լեզվական միավորները, ինչպես, ասենք, չեն համեմատվում հեքիաթն ու բարդ ստորադասական նախադասությունը: Նման համեմատության եւ զուգահեռներ անցկացնելու հիմք է դարձել այն, որ դարձածների մի մասը, այսինքն՝ հաղորդակցական դարձվածքները առածների նման արտահայտվում են մեկ նախադասությամբ եւ ունեն վերաիմաստավորման հատկանիշ, սակայն դրանք, ինչպես ասվեց, համեմատելի չեն: Պարզապես առածները՝ որպես բանահյուսական ստեղծագործություններ, կարող են արտահայտվել դարձվածքներով, այսինքն՝ լեզվական միավորներով, ինչպես, ասենք, քառյակը կարող է արտահայտված լինել մեկ բարդ նախադասությամբ: Եթե մի փոքր ընդլայնենք շրջանակը՝ ցույց տալու համար այս իրողությունը, ապա կարող ենք այլ օրինակներ բերել: Օրինակ՝ *անտուն* բառը բառակազմական բաղադրիչների բաժանելու դեպքում կառանձնանան *ան-* նախածանցը եւ *տուն* արմատը: Միեւնույն բառը վանկերի կբաժանվի հետեւյալ ձեւով՝ *ան-տուն*: Այս բառի առաջին վանկն է *ան-*, իսկ երկրորդը՝ *տուն*: Այսինքն՝ երկու դեպքում էլ առանձնացան *ան* եւ *տուն* բաղադրիչները, սակայն մի դեպքում դրանք նախածանց եւ արմատ են, մյուս դեպքում՝ վանկեր, քանի որ ուսումնասիրման եւ հետեւաբար նաեւ վերլուծության տեսանկյուններն են տարբեր: Եթե ասվածն ավելի կոնկրետ ներկայացնենք վերը բերվածի առնչությամբ եւ մեկ այլ համեմատություն կատարենք, ապա կարող ենք ասել, որ միեւնույն իրողությունը մի դեպքում անվանում ենք քառյակ, երբ ուսումնասիրում ենք գրականագիտական մոտեցմամբ, իսկ մյուս դեպքում՝ բարդ նախադասություն, երբ լեզվաբանական մոտեցմամբ ենք ուսումնասիրում: Հիշենք, օրինակ, Հովհաննես Թումանյանի հայտնի քառյակներից մեկը (բերվում է հեղինակի կետադրությամբ).

Աշնան ամպին ու զամպին,
Մոլոր նստած իր ճըմբին,
Լոռու հանդում՝ մի արտուտ
Նայում է միշտ իմ ճամփին:

Այս քառյակն արտահայտված է մեկ նախադասությամբ, այսինքն՝ շարահյուսական առումով բերվածը մեկ պարզ ընդարձակ նախադասություն է՝ կազմված գլխավոր ու երկրորդական անդամներից: Մինչդեռ որպես գրական ստեղծագործություն՝ սա մեկ ամբողջական քառյակ է՝ իր գեղարվեստական ու տաղաչափական հատկանիշներով: Սակայն երկու դեպքում էլ գործ ունենք լեզվական միեւնույն միավորներով արտահայտված միեւնույն կապակցության հետ:

Նույն ձեւով էլ առածների ու դարձվածքների հարաբերությունն է: Լեզվական միեւնույն կապակցությունը՝ որպես բանահյուսության ժանր, առած է, որը կարող է արտահայտված լինել լեզվական տարբեր միավորներով, որոնց թվում՝ նաեւ դարձվածքով: Այս մոտեցմամբ առածները քննելիս առանձնանում է երեք խումբ. *ա) առածներ, որոնք կառուցվածքով լիովին համընկնում են մեկ դարձվածային միավորի, այսինքն՝ արտահայտված են մեկ դարձվածքով. բ) առածներ, որոնց մեջ գործածված է դարձվածային միավոր, սակայն առածն ամբողջությամբ չի համընկնում դարձվածքին. գ) առածներ, որոնք արտահայտված չեն դարձվածքով, եւ նրանց կազմում չկա դարձվածք*: Այսինքն՝ սրանք արտահայտված են լեզվական այլ միավորներով, օրինակ՝ բարդ նախադասությունով: Օրինակ՝ *Եզները կորչելուց հետո գոմը փակեցին*, *Պատերն ականջ ունեն* կապակցությունները, մեր կարծիքով, առածներ են, որոնք արտահայտված են դարձվածային միավորներով: *Աչքը ծակ մարդուն մի բուռ հողը կկշտացնի* կապակցությունն առած է, որի մեջ կա *աչքը ծակ* դարձվածային միավորը: Իսկ *Ուղտին ասացին՝ մեջքդ ծուռ է, ասաց. -Ի՞նչս է ուղիղ, որ մեջքս ուղիղ լինի* կապակցությունն առած է, որը ո՛չ ամբողջությամբ է դարձվածային միավորով արտահայտված, ո՛չ էլ նրա կազմում է դարձվածք գործածված:

Հետեւաբար կարծում ենք, որ ոչ թե անհրաժեշտ է դարձվածքի եւ առածի միջեւ տարբերակիչ հատկանիշներ փնտրել, այլ առանձնացնել այն դարձվածքները, որոնք առածների արտահայտիչներ են, այսինքն՝ ծավալով համընկնում են առածին, եւ այն դարձվածքները, որոնք առածների արտահայտիչ չեն, օրինակ՝ *շունը շապիկ է հագել, կատուն՝ վարտիք* (այսինքն՝ սաստիկ խառնաշփոթություն է) կապակցությունը դարձվածք է, բայց առած չէ, քանի որ չունի խրատական երանգ, որը առածների էական հատկանիշն է: Այդ դեպքում կհամեմատվեն եւ կուսումնասիրվեն միեւնույն մակարդակի միավորներ: Դրանք տարբերակելուց հետո էլ կուսումնասիրվեն դարձվածքներով արտահայտված առածները որպես բանահյուսական ժանրի նմուշներ, ինչպես որ ուսումնասիրվում են նաեւ ոչ դարձվածային միավորներով արտահայտված առածները:

Արտաշես ՍԱՐԳՍՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2016-2017 ուսարվա ընդունելություն Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում եւ Ընծայարանում

Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան եւ Ընծայարան կարող են դիմել 15 տարին լրացած այն հայորդիները, որոնք ունեն թերի միջնակարգ, միջնակարգ եւ ավելի բարձր կրթություն:

Դիմորդները Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան եւ Ընծայարան ընդունվելու համար հանձնում են քննություն-հացազրույց հետեւյալ առարկաներից.

1. հայոց լեզու (գրավոր),
2. հայ գրականություն (գրավոր),
3. հայոց պատմություն (գրավոր),
4. երաժշտություն (երգեցողություն, երաժշտական ընդունակություն, ռիթմի զգացողություն):

Դիմումները եւ ներքոհիշյալ փաստաթղթերը ներկայացվում են Ժառանգավորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսչի անունով.

1. դիմում,
2. թերի միջնակարգ, միջնակարգ կամ ավելի բարձր կրթության վկայական,
3. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մկրտության վկայական,
4. ինքնակենսագրություն եւ 2 լուսանկար,
5. բնութագիր՝ եկեղեցու հոգեւոր հովվից կամ առաջնորդից,
6. բնութագիր՝ դպրոցի տնօրենից,
7. ծնողների համաձայնագիրը,
8. զինվորական կցագրման վկայական,
9. անձնագրի պատճենը:

Ուսանողի ճանապարհածախսը, սնունդը, հագուստը, բժշկական եւ ուսման ծախսերը ապահովում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը:

Փաստաթղթերն անձամբ ներկայացնել Գեւորգյան հոգեւոր ճեմարանի քարտուղարություն:

Դիմումներն ընդունվում են ամեն օր, բացի կիրակիից, հունիսի 1-ից մինչեւ հուլիսի 30-ը՝ ժամը 10:00-16:00 (շաբաթ օրը՝ մինչեւ ժամը 13:00): Հեռ. (010) 517-180, (010) 517-181:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.6.2016 թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ